«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 3 տեղացի և 2 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1. իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2. որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն Զեկույցը պարունակում է «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային դիտարկումները ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 17

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 18

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 21

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 27

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 31

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 35

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 38

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 40

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 44

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 46

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 47

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 52

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 55

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 58

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 59

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 60

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկն առաջնորդվում է «Իմ քայլը» հիմնադրամի 2023թ. հրապարակված ռազմավարությամբ: Հիմնադրամի կարևոր ռազմավարական նպատակներից է «խրախուսել կրթությունը, որպես ազգային առաջնահերթություն՝ հիմքում ունենալով նորագույն տեխնոլոգիաների ուսուցումը հանրակրթական և ակադեմիական միջավայրերում»: Այս նպատակի իրականացմանը, ինչպես նաև մարդկային կապիտալի զարգացմանը և մրցունակ կրթության տրամադրմանը ուղղված է եղել «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» մագիստրոսական ծրագրի ներդնումը և «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ստեղծումը՝ որպես այդ ծրագիրն իրականացնող կառույց:

Հիմնարկը գործում է ընդամենը 3 տարի, առաջին անգամ է իրականացրել ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն և դիմել հավատարմագրման: Փորձի պակասը փորձագիտական խումբը նույնպես հաշվի է առել գնահատումն իրականացնելիս՝ ավելի շատ համադրելով Հիմնարկի նպատակադրումները և առկա հնարավորությունները, ձևավորված մոտեցումները, ներդրված գործընթացների արդյունավետությունը, ուսանողների ու շրջանավարտների բավարարվածության մակարդակը և այլն:

«Իմ քայլը» հիմնադրամի առաքելության ձևակերպման մեջ կրթությանը վերաբերող մասը բավարար հստակ չի, իսկ Հիմնարկի, որպես կրթական ծառայություններ մատուցող կառույցի, առաքելությունն ընդհանրապես ձևակերպված չէ: Հիմնարկի ռազմավարական կառավարման ներդրման ուղղությամբ առաջին քայլերից է 2024-29թթ. համար մշակված «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ռազմավարություն» փաստաթուղթը: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է բոլոր շահակիցների հետ քննարկումների և աշխատաշուկայի վերլուծության արդյունքների հիման վրա հստակեցնել Հիմնարկի՝ որպես գերազանցության կենտրոնի ռազմավարական նպատակները, պլանավորել ակնկալվող արդյունքները, իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և ժամանակահատվածները, մշակել գնահատման ցուցիչները և այլն:

«Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը իրականացնում է մեկ՝ “Quanta” - «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» մեկուկես տարվա տևողությամբ մագիստրոսական կրթական ծրագիր, որը մշակվել է ոլորտի միջազգային ճանաչում ունեցող մասնագետների կողմից: Ծրագրի վերջնարդյունքները համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի բնութագրիչներին: Կրթական ծրագիրը յուրահատուկ է այն առումով, որ ուսանողները ծրագրի շրջանակներում ուսումնասիրում են թեմաներ և ուղղություններ, որոնք ՀՀ-ում դեռևս խորը հետազոտված չեն: Ծրագրի

առանձնահատկություններից է ուսանողների ինտեգրումը միջազգային գիտական խմբերում՝ աշխարհի առաջատար գիտնականների հետ հաղորդակցման միջոցով. սա արտացոլում է ծրագրի միջազգային բնույթը և հնարավորություններ է ստեղծում շարժունության համար: Ծրագրի մյուս դրական արդյունքը ձեռնարկություններին և գիտահետազոտական ինստիտուտներին նոր որակի մասնագետներով ապահովելն է, քանի որ այն կառուցված է՝ տեսություն- փորձ- տեխնոլոգիա շղթայով:

Կրթության կազմակերպման Հիմնարկի մոտեցումները հիմնված են դասական հիմնարար կրթության վրա՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ. բացի դասախոսություններից, որը արտասահմանից ժամանած դասախոսների դեպքում տևում է մեկ-երկու շաբաթ, կիրառվում են նաև գործնական և լաբորատոր պարապմունքներ:

Ուսանողների գնահատման մոտեցումներն ու ընթացակարգը Հիմնարկում կանոնակարգված է մագիստրոսական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում, սակայն դասընթացների ծրագրերում չկան գնահատման ձևերը, բաղադրիչները և չափանիշները: Կախված առաջադրանքի բնույթից՝ դասախոսներն իրենք են ընտրում գնահատման բաղադրիչները և չափանիշները, որոնց ուսանողները նախօրոք կարող են տեղեկացված չլինել:

Որակավորումների շնորհումը ավելի հստակ կանոնակարգված է մագիստրատուրայում թեզերի պաշտպանության կազմակերպման կարգով և դրանց պատրաստման մեթոդական ուղեցույցով: Թեզերի թեմաները 1-ին կիսամյակի առաջին ամսվա ընթացքում հաստատվում են Գիտական խորհրդի կողմից: Կրթական ծրագրի մշակող խումբը կարևոր է համարում թեզերի թեմաների արդիականությունը և գիտական նորույթի առկայությունը: Մագիստրոսը իր գիտական ղեկավարի հետ իրականացնում է գիտահետազոտական աշխատանք՝ պատրաստելով մագիստրոսական ատենախոսությունը, որը հետագայում նախատեսվում է տպագրել գիտական հոդվածի տեսքով: Ծրագրի առաջին շրջանավարտների որոշ աշխատանքներ ուղարկված են հրապարակման միջազգային ամսագրեր, իսկ մի մասի հրապարակումը դեռևս ընթացքի մեջ է:

Հիմարկի և կրթական ծրագրի ղեկավարների համատեղ աշխատանքի արդյունքում ուսումնական գործընթացում ներգրավված է տեղացի և արտերկրից հրավիրված բարձր որակավորում ունեցող դասախոսական կազմ: Դասավանդում են համապատասխան ուղղությունների բարձրակարգ մասնագետներ, ինչը բարձրորակ կրթության տրամադրման և հետազոտական աշխատանքների իրականացման գրավական է: Կրթական ծրագիրը կարելի է համարել բացառիկ՝ շնորհիվ ոչ միայն յուրահատուկ դասընթացների առկայության, այլև դասախոսական կազմի բարձր մասնագիտական մակարդակի: Քանի որ Հիմնարկը հիմնական դասախոսական կազմ չունի, և ամեն տարի նոր պայմանագրեր են կնքվում հրավիրյալ դասախոսների հետ, փորձագիտական խումբը գտնում է, որ մշտական ուշադրության կարիք ունեն անձնակազմի կայունության ապահովման և վստահելի կադրային ռեզերվի ձևավորման խնդիրները: Բազմազանեցման կարիք ունեն նաև տեղացի և միջազգային դասախոսների, ինչպես նաև դասախոսների և ուսանողների միջև հաղորդակցության ձևերը և հնարավորությունները:

Հիմնարկը մագիստրոսական ծրագրի իրականացման և հիմնական ռազմավարական նպատակներին հասնելու համար վարձակալության միջոցով ապահովված է անհրաժեշտ բազային ռեսուրսներով, ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր ուսանողների և դասախոսների համար, ունի մասնագիտական գրականությամբ համալրված էլեկտրոնային

գրադարան, ինչը բավարար է անհրաժեշտ ուսումնական միջավայր ձևավորելու համար։ «Իմ քայլը» հիմնադրամի ֆինանսավորումը կայունության երաշխիք է ծրագրի իրականացման համար մոտակա 6-7 տարիների համար, սակայն ծրագրի շարունակականության համար վտանգ է մեկ աղբյուրից ֆինանսավորման փաստը, և աղբյուրների դիվերսիֆիկացիայի կարիք կա։

Աշխարհում քվանտային ֆիզիկայի ոլորտի զարգացման տեմպերը հաշվի առնելով՝ նորագույն տեխնոլոգիաների և լաբորատոր բազայի անընդհատ թարմացման և ավելացման խնդիր պետք է ունենալ աչքի առաջ։ Ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիաների խնդիր հիմա էլ առկա է Հիմնարկում, որի լուծման համար մեծ ծավալի պետական ֆինանսական ներդրումների կարիք կա։ Մինչև սեփական ռեսուրսային բազայի ձևավորումը, փորձագիտական խումբը առաջարկում է ընդլայնել եղած համագործակցությունները և նոր համագործակցություններ հաստատել տեղական և միջազգային գործընկերների հետ՝ նրանց լաբորատոր բազաների օգտագործման նպատակով։

“Quanta” - «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» կրթական ծրագրի կառուցվածքի, բովանդակության և ակնկալվող վերջնարդյունքների, դասախոսական կազմի կողմից կիրառվող ուսուցման և գնահատման մեթոդների, թեզերի թեմատիկայի ընտրության մոտեցումների, դրանց գրախոսման և պաշտպանության գործընթացների կազմակերպման գործընթացների, դասախոսական կազմի և ուսումնական միջավայրի ուսումնասիրություններն առկա խնդիրներով հանդերձ՝ թույլ են տալիս եզրակացնել, որ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկն ընդհանուր առմամբ ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում։ Միևնույն ժամանակ անհրաժեշտություն կա կարճ ժամանակամիջոցում լուծել առկա խնդիրները և չեզոքացնել գոյություն ունեցող վտանգները հստակ գործողությունների միջոցով։

«Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի կառուցվածքը չի կրկնում տրադիցիոն բուհական կառուցվածքը։ Փոքր անձնակազմը տալիս է որոշ առավելություններ, սակայն նաև ձևավորվել է մի իրավիճակ, երբ նույն աշխատակիցը իրականացնում է մի քանի գործառույթներ, որոշ դեպքերում անխուսափելիորեն առաջացնելով շահերի բախում (օրինակ, ուսումնական գործընթացների պատասխանատուն նաև որակի ապահովման պատասխանատուն է)։ Որոշ գործընթացներ էլ չեն իրականացվում բավարար մակարդակով մարդկային ռեսուրսների պակասի պատճառով (օրինակ՝ որակի ապահովում, միջազգային կապերի համակարգում)։

Կառավարման հիմնական որոշումները կայացվում են Հիմնարկի տնօրենի կողմից, քանի որ Գիտական խորհուրդը խորհրդատվական մարմին է համարվում։ Հիմնարկի գործող կառուցվածքը փաստացի զրկում է շահակիցներին կառավարման գործընթացներին անմիջական մասնակցությունից և որոշումների ընդունման այդ հնարավորությունից։ Հիմնարկը պետք է վերլուծի իր կառուցվածքի և կառավարման համակարգի համապատասխանությունը ռազմավարական նպատակներին և դիտարկի դրա փոփոխության և անձնակազմի ավելացման հարցերը։

Կառավարման արդյունավետության բարձրացմանը կարող է նպաստել որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքների բարելավումը, ՈԱ համակարգին տրամադրվող մարդկային և նյութական ռեսուրսների ավելացումը, ՈԱ համար պատասխանատու անձանակազմի մանագիտական կարողությունների աճը։ Որակի ներքին ապահովման գործողությունների պլանի և ընթացակարգերի հստակեցման և դրանց կիրարկման դեպքում

կհամակարգվեն Հիմնարկի գործունեության և դրա վրա ազդող գործոնների վերաբերյալ օբյեկտիվ տվյալների պարբերական հավաքագրման վստահելի աղբյուրները և քանակությունը: Իրականացվող գործընթացների նկատմամբ կկիրառվի որակի կառավարման ՊԻՍԲ շրջափուլը, տվյալները ժամանակին կվերլուծվեն և հնարավոր կդառնա հիմնավոր որոշումներ կայացնել վերլուծությունների արդյունքների հիման վրա:

«Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը դիմորդների ընդգրկման ակտիվ քաղաքականություն է վարում, ինչը նպաստում է դիմորդների շրջանում ծրագրի մասին տեղեկատվության տարածմանը: Առանձնակի ուշադրության է արժանի ամառային դպրոցների պարբերական կազմակերպումը, որը հնարավորություն է տալիս դիմորդներին ծանոթանալ կրթական ծրագրի բովանդակությանը և վարպետաց դասերի ժամանակ նախնական մասնագիտական գիտելիքներ ձեռք բերել: Իրականացված միջոցառումների արդյունքում ապահովվում է լիցենզիայով սահմանված տեղերի չափով ընդունելություն, սակայն մտահոգիչ է ակադեմիական անբավարար առաջադիմություն պատճառով դուրս մնացող ուսանողների տոկոսը.պատճառները պետք է փնտրել ընդունելության իջեցված շեմի և օտար լեզուների իմացության ցածր մակարդակի մեջ: Մյուս հարցերի հետ միասին՝ այս խնդիրը նույնպես Հիմնարկի ուշադրության կենտրոնում պետք է լինեն:

Հիմարկը իրականացնում է ուսանողների կրթական կարիքների վերհանման քայլեր, առկա են այդ կարիքներին արձագանքման օրինակներ: Ուսանողները գոհ են կազմակերպվող լրացուցիչ դասընթացներից և տրամադրվող խորհրդատվական ծառայություններից. վարչական անձնակազմը մշտական կապի մեջ է ուսանողների հետ: Միևնույն ժամանակ, դասախոսական կազմը և ուսանողները անհրաժեշտ են համարում այնպիսի միասնական համացանցային հարթակի ստեղծումը, որը հանարավորություն կտա ուսումնական գործընթացի կազմակերպման և դասավանդման համար անհրաժեշտ բոլոր նյութերը հասանելի դարձնել ուսանողներին:

«Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» կրթական ծրագրի առաջին շրջանավարտներն ապահովված են աշխատանքով, սակայն ոչ ստացած մասնագիտության ուղղությամբ: Հիմնարկը քայլեր պետք է իրականացնի շրջանավարտների կարիերային նպաստելու ուղղությամբ՝ ստեղծելու կայուն կապեր ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան կառույցների հետ, որոնք հնարավորություն կտան շրջանավարտներին ուսումը շարունակել կամ աշխատանքի անցնել իրենց իսկ մասնագիտությամբ:

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի ռազմավարական ծրագրում շեշտադրվում է ԲՏՃՄ ուղղություններով ՀՀ-ի հետազոտական պոտենցիալի բացահայտումն ու դրա զարգացումը միջազգային համագործակցությունների միջոցով: Մինչդեռ Հիմնարկը դեռևս չի մշակել որևէ ծրագիր, որտեղ արտացոլված կլինեին նրա հետազոտական հետաքրքրությունները և հավակնությունները, նկարագրված կլինեին ոլորտի նպատակները և խնդիրները: Հիմարկը այժմ պատրաստ է ֆինանսավորել ուսանողների մասնակցությունը տարբեր միջազգային կոնֆերանսներին՝ իրենց թեզերի շրջանակներում իրականացվող հետազոտությունների ներկայացման նպատակով: Ծրագրում ընդգրկված դասախոսները և կրթական ծրագրի ղեկավարը ունեն ինքնուրույն՝ իրենց հիմական աշխատանքի վայրում և համատեղ գիտական հետազոտություններ իրականացնելու մեծ փորձառություն. փաստացի չկա որևէ դասախոս, որը հետազոտությամբ չի զբաղվում: Փորձագիտական խումբը գտնում է, որ առկա դասախոս-գիտնականների ռեսուրսների կենտրոնացմամբ և ընդհանուր

հետաքրքրությունների շրջանակում հնարավոր է ձևավորել տեղացի և արտասահմանցի գիտնականներից կազմված հետազոտական խմբեր՝ իրականացնելու աշխատանքներ Հիմնարկի՝ գիտության ոլորտի ռազմավարական նպատակների ուղղությամբ՝ ակտիվորեն ներգրավելով մագիստրոսներին:

Հիմնարկում գործում է հաշվետվողականության որոշակի համակարգ՝ ներքին և արտաքին բաղադրիչներով. հաշվետվությունները պարունակում են ուսումնական գործընթացների և ֆինանսական ծախսերի վերաբերյալ փաստական տվյալներ: Հաշվետվությունների ձևաչափերը և որակը բարելավման կարիք ունեն. դրանք պետք է հիմնված լինեն արդյունքների ձեռքբերումը հավաստող փաստացի տվյալների վերլուծության վրա, ինչը նաև կհիմնավորի ռազմավարական նպատակների իրագործման չափը:

Հիմնարկը «Իմ քայլը» հիմնադրամի կայքի միջոցով որոշակիորեն ապահովում է իր ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը: Այդ նպատակին ծառայեցվում են նաև տարբեր սոցիալական հարթակներ և ԶԼՄ-ներ: Բացի այդ, իրականացվում են հասարակության հետ կապերի զարգացմանն ուղղված նպատակային աշխատանքներ, օլիմպիադաներ, PR արշավներ և այլն: Միևնույն ժամանակ կարևոր է, որ ծրագրի մրցակցային առավելություններն առավել համափարփակ ներկայացվեն շահակիցներին և հանրությանը, ինչը կնպաստի ծրագրի նկատմամբ վստահության բարձրացմանը և դիմորդների ներգրավմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. գերազանցության սկզբունքի հիման վրա կազմված՝ յուրահատուկ մասնագիտության կրթական ծրագիրը, որում ներառված որոշ առարկաներ առաջին անգամ են դասավանդվում ՀՀ-ում,
2. արտասահմանից և տեղական համալսարաններից հրավիրված մոտիվացված և բարձրակարգ դասախոսական կազմի առկայությունը,
3. ֆինանսական տեսակետից ուսման գրավիչ լինելը դիմորդների համար, քանի որ ծրագիրը անվճար է բոլոր ընդունվածների համար:
4. կրթական ծրագրի շրջանակներում ուսանողների ակտիվ ներգրավվածությունը հետազոտական գործունեության մեջ և նրանց թողարկումը որպես ոլորտի պատրաստի հետազոտողներ,
5. ուսանողների կրթական կարիքներից ելնելով՝ լրացուցիչ դասընթացների կազմակերպումը և խորհրդատվությունների տրամադրվումը,
6. դասախոսական կազմի կայունության ապահովման մեխանիզմների, մոտակա տարիների համար անհրաժեշտ կադրային ռեզերվի առկայությունը,
7. հետազոտական գործունեության և դասավանդման անմիջական կապը, հետազոտության արդյունքների կիրառումը դասավանդման պրոցեսում,
8. գործընթացների թափանցիկությանը, հաշվետվողականությանը և հասարակությանն ուղղված նպատակային աշխատանքների իրականացումը՝ PR արշավներ, ամառային դպրոցներ, օլիմպիադաներ և այլն, ուղղված հասարակության լայն շերտերին գիտելիքների և արժեքների փոխանցմանը,
9. արտաքին համագործակցությունների առկայությունը, որոնք հնարավորություններ են ստեղծել դասախոսների ներգրավման և ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար:

Հաստատության թույլ կողմերն են.

1. գործունեության պլանավորման, այդ թվում մոնիտորինգի և ռիսկերի կառավարման որևէ տեսակի պլանների բացակայությունը,
2. կառավարչական տարբեր գործընթացներում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կիրառման բացակայությունը,
3. ծրագրի գնահատման և կառավարման որոշումների կայացման համար ոչ բավարար տվյալների հավաքագրումը և դրանց վերլուծության բացակայությունը,
4. շրջանավարտների համար աշխատանքի ձեռքբերման անորոշությունը և ըստ ստացած մասնագիտության աշխատատեղերի փաստացի բացակայությունը,
5. դասախոսական կազմի պարբերաբար գնահատման բազմաբաղադրիչ համակարգի բացակայությունը,
6. մեկ աղբյուրից ֆինանսավորման փաստը, ֆինանսների տնօրինման հաստատված հստակ քաղաքականության բացակայությունը,
7. ժամանակակից սարքավորումներով հագեցած սեփական ուսումնագիտական լաբորատորիաների բացակայությունը,
8. ուսանողների շարժունությանը (ինչպես արտագնա, այնպես էլ ներգնա) նպաստող համագործակցությունների բացակայությունը արտասահմանյան գիտակրթական հաստատությունների հետ,
9. կրթական ծրագրի բարելավման տեսակետից ՈԱ համակարգի, ՈԱ գործողությունների պլանի և ընթացակարգերի բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ձևակերպել «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի զարգացման տեսլականը և առաքելությունը տրամադրվող կրթական ծառայությունների առանձնահատկությունների հաշվի առնումով՝ հիմնված շահակիցների հետ քննարկումների վրա:
2. Շարունակել ռազմավարական կառավարման համակարգի ներդրման աշխատանքները՝ համապատասխան մեխանիզմներով և գործիքակազմով:
3. Շահակիցների հետ քննարկումների և աշխատաշուկայի վերլուծության արդյունքների հիման վրա հստակեցնել Հիմնարկի ռազմավարական նպատակները, մշակել համապատասխան ռազմավարական ծրագիր կամ ճանապարհային քարտեզ՝ հստակ ժամանակացույցով, պատասխանատուներով, տրամադրվող ռեսուրսներով, ակնկալվող արդյունքներով, գնահատման ցուցիչներով և այլն:
4. Մշակել հնարավոր ռիսկերի կառավարման ծրագիր մոտակա 5 տարիների համար:
5. Ներդնել ըստ ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների արդյունքների գնահատման հաշվետվությունների ձևաչափեր:

Կառավարումն ու վարչարարությունը

6. Վերլուծել Հիմնարկի գործող կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական նպատակներին՝ դիտարկելով վարչական անձնակազմի ավելացման հնարավորությունները:

7. Կառավարման կոլեգիալությունը ապահովելու նպատակով դիտարկել Գիտական խորհուրդի կարգավիճակը փոխելու տարբերակը որպես կառավարման մարմին:
8. «Իմ Քայլը» հիմնադրամի հետ համատեղ ներդնել ֆինանսների տնօրինման քաղաքականություն, որը հնարավորություն կընձեռի ռազմավարական պլանին համապատասխան իրականացնելու ֆինանսական երկարաժամկետ պլանավորում:
9. Թափանցիկ և մասնակցային կառավարում ապահովելու նպատակով մշակել որոշումներ կայացնելու գործընթացներում շահակիցների մասնակցությունը երաշխավորող ընթացակարգեր:
10. Կառավարման համակարգում ներդնել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը՝ ապահովելու գործընթացների շարունակական բարելավումը:
11. Մշակել մասնագիտությունների կրթական ծրագրի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության ամբողջական քանակը, հավաքագրման վստահելի մեխանիզմները և վերլուծության գիտականորեն հիմնավորված մեթոդներ՝ դրանց կիրառումը ապահովելու նպատակով:
12. Օգտագործել կայքէջի Հիմնարկին հատկացված բաժինը ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվություններ տրամադրելու համար:

Մասնագիտության կրթական ծրագրերը

13. Ստեղծել բոլոր դասախոսներին և ուսանողներին հասանելի միասնական էլեկտրոնային հարթակ՝ ծրագրի բաղադրիչները և դասավանդվող նյութի բովանդակությունը նրանց հասանելի դարձնելու նպատակով:
14. Դասախոսների հետ քննարկումների միջոցով մշակել ուսուցման և գնահատման մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն և առարկայական նկարագրերը համապատասխանեցնել այդ քաղաքականությանը:
15. Քայլեր ձեռնարկել ուսանողների շարժունությունը զարգացնելու համար՝ համագործակցության պայմանագրեր կնքելով ինչպես ՀՀ, այնպես էլ արտասահմանյան համալսարանների հետ:
16. Ավելացնել լաբորատոր աշխատանքների ծավալը կրթական ծրագրի շրջանակներում՝ նպաստելու շրջանավարտների գործնական կարողությունների ընդլայնմանը:
17. Մշակել մեխանիզմներ և ցուցիչներ կրթական ծրագրի արդյունավետության գնահատման համար՝ հաշվի առնելով ծրագրի իրականացման առաջին շրջափուլի արդյունքները:

Ուսանողները

18. Վերանայել դիմորդների ընդունելության չափանիշները՝ դրանք համապատասխանեցնելով կրթական ծրագրի իրական մուտքային պայմաններին՝ պակասեցնելու դուրս մնացող ուսանողների մասնաբաժինը:
19. Մշակել Ուսանողի ձեռնարկ, որտեղ արտացոլված կլինի ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվությունը Հիմնարկի գործունեության, կրթական գործընթացների իրականացման ընթացակարգերի, ուսանողների իրավունքների ու պարտականություններ, կրթական ծրագրի բովանակության և այլնի վերաբերյալ:

20. Քայլեր ձեռնարկել շրջանավարտների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ նպաստելով նրանց ձեռք բերած մասնագիտությամբ աշխատելուն:
21. Ներդնել ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

22. Ներդնել դասախոսական կազմի պարբերաբար գնահատման բազմաբաղադրիչ համակարգ՝ դասախոսի աշխատանքը ավելի օբյեկտիվ և անկողմնակալ գնահատելու նպատակով:
23. Մշակել կադրերի ընտրության, պահպանման և առաջխաղացման քաղաքականություն՝ դիտարկելով դասախոսի օգնականի ինստիտուտ ներդնելու հնարավորությունը:
24. Կանոնակարգել կադրային ռեզերվի ձևավորումը՝ հստակեցնելով ընթացակարգը և պատասխանատուներին:
25. Ներդնել մեխանիզմներ արտասահմանցի դասախոսների գիտական և դասախոսական պոտենցիալի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
26. Ստեղծել դասախոսների առցանց ֆորում՝ դասավանդման խնդիրների քննարկման, լավ փորձի դուրսբերման ու տարածման համար:

Հետազոտությունը և զարգացումը

27. Մշակել և իրագործել հետազոտության և դրա արդյունքների հիման վրա Հիմնարկի զարգացման հստակ քաղաքականություն՝ ուղղված Հիմնադրամի ռազմավարական նպատակների իրականացմանը:
28. Դասախոս-գիտնականների ռեսուրսների ուժերի կենտրոնացմամբ ձևավորել տեղացի և արտասահմանցի գիտնականներից կազմված հետազոտական խմբեր՝ իրականացնելու աշխատանքներ Հիմնարկի՝ գիտության ոլորտի ռազմավարական նպատակների ուղղությամբ՝ ակտիվորեն ներգրավելով մագիստրոսներին:
29. Խրախուսել բարձր վարկանիշ ունեցող միջազգային հանդեսներում և պարբերականներում դասախոս-դասախոս և դասախոս-ուսանող համատեղ տպագրությունները՝ Հիմնարկի հետազոտական ոլորտի ռազմավարական ուղղություններով:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

30. Ընդլայնել եղած համագործակցությունները և նոր համագործակցություններ հաստատել տեղական և միջազգային գործընկերների հետ՝ նրանց լաբորատոր բազաների օգտագործման նպատակով:
31. Քայլեր ձեռնարկել կառավարությունից կամ ԲՏԱ նախարարությունից ֆինանսավորում ստանալու համար՝ ձևավորելու գործունեության երկարաժամկետ կայունության երաշխիք:
32. Ֆինանսական միջոցներ տրամադրել աշխատակիցների և ուսանողների առողջության պահպանմանն ուղղված ծառայություններ կազմակերպելու համար:

33. Ներդնել մեխանիզմներ ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության, ինչպես նաև ուսուցման որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների կարիքների գնահատման համար:

Հասարակական պատասխանատվությունը

34. Բարելավել հաշվետվությունների ներկայացման ձևաչափերը և բովանդակությունները՝ դրանք համապատասխանեցնելով գործողությունների պլանավորված արդյունքներին և դարձնելով տվյալահենք:
35. Մշակել հասարակության հետ կապերի ապահովման համապարփակ քաղաքականություն, որը կներառի գործողությունների երկարաժամկետ պլանավորում:
36. Ավելացնել Հիմնարկի ներկայացվածության չափը Հիմնադրամի կայքէջում կամ ունենալ առանձին էջ՝ նպաստելու Հիմնարկի գործունեության թափանցիկությանը և համապարփակ տեղեկատվության տարածմանը:
37. Վերլուծել հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման մեխանզիմների արդյունավետությունը, պլանավորել և ներդնել նոր մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

38. Մշակել և իրագործել միջազգայնացման և արտաքին կապերի խրախուսման իրատեսական քաղաքականություն:
39. Օգտագործելով արտասահմանցի դասախոսների կապերը՝ ձևավորել միջազգային գիտակրթական հաստատությունների հետ համագործակցությունների շրջանակ՝ նպաստելով ուսանողների շարժունությանը:
40. Դիտարկել դիմորդների կողմից օտար լեզվի իմացության սահմանված մակարդակի տիրապետումը որպես ընդունելության նախապայման:

Որակի ներքին ապահովման համակարգը

41. Շահակիցների հետ քննարկումների հիման վրա վերանայել, հաստատել և հրապարակել ՈԱ քաղաքականությունը և ընթացակարգերը՝ շեշտելով կրթական ծրագրի որակի ապահովումը:
42. Իրականացնել գերազանցության կենտրոնների ՈԱ համակարգերի բենչմարքինգ՝ որոշելու Հիմնարկի ՈԱ համակարգի կառուցվածքը:
43. Դիտարկել որակի ապահովման պատասխանատու առանձին աշխատակցի ներգրավելու հնարավորությունը, ՈԱ գործընթացներում ներառված աշխատակիցներին մասնակից դարձնել ոլորտային վերապատրաստումների:
44. Կազմել ՈԱ գործողությունների պլան՝ հիմնված որակի կառավարման ՊԻՍԲ շրջափուլի վրա բոլոր գործընթացների համար, հետևողականորեն իրականացնել պլանին համապատասխան գործունեություն:
45. Կանոնակարգել ՈԱ համակարգի կառուցվածքային բոլոր միավորների պատասխանատվությունները կրթական ծրագրի իրականացման ՈԱ գործընթացների շրջանակներում:

46. Հստակեցնել որակի ներքին և արտաքին գնահատումների համար անհրաժեշտ տեղեկատվության քանակը, աղբյուրները և հավաքագրման մեխանիզմները, գնահատումների արդյունքների վերլուծությունները հասանելի դարձնել շահակիցներին:

_____

Անուշավան Մակարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

29-ը մայիսի, 2024թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից[1].

1. **Անուշավան Մակարյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Արամ Սահարյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի Տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Ալեքսանդր Գուսև՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մ. Գ. Մեշերյակովի անվան տեղեկատվական տեխնոլոգիաների լաբորատորիայի առաջատար գիտաշխատող, Դուբնայի պետական համալսարանի պրոֆեսոր, փորձագիտական խմբի միջազգային անդամ,
4. **Մաքսիմ Վինիչենկո՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի Էլեկտրոնիկայի և հեռահաղորդակցության ինստիտուտի Ինժեներական ֆիզիկայի բարձրագույն դպրոցի դասախոս, «Տեխնիկական ֆիզիկա» մագիստրատուրայի և բակալավրիատի ՄԿԾ ղեկավար, փորձագիտական խմբի միջազգային անդամ,
5. **Իննա Մելքոնյան՝** Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Բիոինժեներիա և բիոինֆորմատիկա բաժնի 1-ին կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար **Վարդուհի Գյուլազյանը:**

Թարգմանությունը կատարել է **Աննա Խիզանցյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը հետ է վերադարձվել հաստատություն՝ տեխնիկական խնդիրների պատճառով: Խնդիրների շտկումից հետո հաստատությունը երկու շաբաթվա ընթացքում ներկայացրել է վերանայված ինքնավերլուծությունը, որը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, Հիմնարկի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է հիմնարկի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբի աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են փորձագետների վերապատրաստումներ:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ, մասնակցել քննություններին: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախանական այց

2024 թվականի մարտի 18-ին «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկում տեղի է ունեցել հանդիպում հաստատության ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձա-գիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. ապրիլի 3-ից 5-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետների հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են Հիմնարկի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր պարտադիր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է Հիմնարկի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 22.05.2024թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը և տրամադրել բուհին 29.05.2024 թ.-ին:

_____

Վարդուհի Գյուլազյան

Փորձագիտական խմբի համակարգող

29-ը մայիսի, 2024 թ.

[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[4] Հավելված 4.Ուսումնասիրված ռեսուրսներ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամը հիմնել է «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը: Հիմնարկի նպատակն է ապահովել բարձրորակ կրթություն և պատրաստել բացառիկ մասնագետներ, նպաստելով գիտության զարգացմանը ՀՀ-ում: Հիմնարկը ստեղծում և իրականացնում է մագիստրոսական կրթական ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում շրջանավարտները կկարողանան զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով, ձևավորել ստարտափներ և կնպաստեն ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների հիմնադրմանը՝ օժանդակելով գիտատեխնոլոգիական ներուժի պահպանմանն ու ընդլայնմանը Հայաստանում:
Հիմնարկը իր մագիստրոսական ծրագրերի նախաձեռնությունների մշակմանը ներգրավում է ՀՀ կամ արտերկրի առաջատար ներուժ:

Կրթություն. «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը 2022 թ. նախաձեռնել է «Quanta» «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի» 1.5 տարվա մագիստրոսական ծրագիրը, ստանալով լիցենզիա գործունեության համար: Մագիստրոսական ծրագիրը մշակվել է Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ինժեներաֆիզիկական ինստիտուտի, ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ընդհանուր ֆիզիկայի և քվանտային նանոկառուցվածքների ամբիոնի պրոֆեսորների հետ համատեղ: Հետևելով բացառիկության սկզբունքին կենտրոնը ներգրավում է արտերկրից հրավիրված բարձր որակավորում ունեցող դասախոսներ առաջատար համալսարաններից

Հետազոտություն. Ուսանողների ավարտական աշխատանքները ղեկավարում են ինչպես արտերկրից, այնպես էլ հայաստանաբնակ բարձր որակավորում ունեցող դասախոսները, որոնք լավագույնն են տվյալ ոլորտում: Հրավիրյալ դասախոսները դասավանդում են QS rankings-ում բարձր հորիզոնականներ զբաղեցնող համալսարաններում (Բերկլի՝ 10-րդ, ԻՏՄՕ՝ 542-րդ և այլն): Մագիստրոսական թեզի թեմաներն ունեն հետազոտական, նորարար բնույթ և պաշտպանելուց հետո տպագրվելու են առնվազն Q-3 ամսագրում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի առաքելությունը ձևակերպված է 2023թ. հրապարակված ««Իմ քայլը» հիմնադրամ-Ռազմավարություն» փաստաթղթում: Հիմնադրամն իր առաքելությունն է համարում «բացահայտել և զարգացնել հայ մարդու ողջ ներուժը, որը հնարավորություն կտա ձևավորել առողջ և գիտակից հասարակություն, և որպես հետևանք՝ անվտանգ և զարգացած պետություն, իրականացնել ծրագրեր, որոնք ուղղված են մարդկային կապիտալի զարգացմանը՝ մարդուն գիտելիք և հմտություն տալու առաջնահերթությամբ»:

Հիմնադրամի կարևոր ռազմավարական նպատակներից է «խրախուսել կրթությունը, որպես ազգային առաջնահերթություն՝ հիմքում ունենալով նորագույն տեխնոլոգիաների ուսուցումը հանրակրթական և ակադեմիական միջավայրերում»: Այս նպատակի իրականացմանը, ինչպես նաև մարդկային կապիտալի զարգացմանը և մրցունակ կրթության ներդնմանն ուղղված քայլերից է «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ստեղծումը:

Գերազանցության կենտրոնն առաջնորդվում է «Իմ քայլը» հիմնադրամի 2023թ. հրապարակված ռազմավարությամբ, որում ներառված «ռազմավարական ծրագրերից» առաջինը վերաբերում է «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» մագիստրոսական ծրագրին և այն իրականացնող Հիմնարկին:

Հիմնադրամի ռազմավարության հիման վրա մշակվել է ««Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի ռազմավարություն» փաստաթուղթը, որը նախատեսված է 2024-29թթ. համար: Այդ տարիների համար որպես ռազմավարական առաջնահերթություններ հստակեցված են գործողություններ 3 ուղղություններով.

1. նախատեսվում է մի շարք այլ մագիստրոսական ծրագրերի ներդնում՝ կենսաինֆորմատիկա, արհեստական բանականություն, ռոբոտաշինություն, օպտոէլեկտրոնիկա ուղություններով,
2. շարունակել ուսանողներին ուղարկել գիտաժողովների,
3. համագործակցել միջազգային և տեղական ընկերությունների հետ՝ ապահովել լաբորատոր հիմք, իսկ շրջանավարտներին՝ աշխատանքով:

Այս գործողությունները ռազմավարության մեջ բաժանվում են երկարաժամկետ (1 տարի), միջնաժամկետ (6 ամիս) և կարճաժամկետ (3 ամիս) ժամանակամիջոցների համար նախատեսված միջոցառումների: Ռազմավարական նպատակները, ակնկալվող արդյունքները, դրանց իրականացման պատասխանատուները, գնահատման ցուցիչները հստակեցված չեն:

Կենտրոնի ռազմավարության մեջ, որպես կրթական ծառայություններ մատուցող կառույցի, առաքելությունը ձևակերպված չէ:

Ինքնավերլուծության մեջ հստակեցված են «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ներքին և արտաքին շահակիցների հիմնական խմբերը.

- ուսանողները և դիմորդները,
- դասախոսական կազմը,
- վարչական և օժանդակ կազմը,
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը,
- Հայաստանի հանրությունը,
- Սփյուռքը:

Միևնույն ժամանակ, որպես Հիմնարկի հիմնական շահակիցներ դիտարկվում են ուսանողները, որոնց կարիքների վեր հանման համար իրականացվում են հարցումներ: Հիմնարկի ռազմավարությունը, առաջնահերթ գործողությունները և միջոցառումները մշակվել են վարչական անձնակազմի կողմից: Փաստացի ներքին և արտաքին շահակիցները չեն մասնակցել դրանց մշակման գործընթացին: Ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբում ընդգրկված է եղել մեկ ուսանող, իսկ արտաքին որևէ շահակից չի մասնակցել ինքնավերլուծությանը կամ դրա քննարկմանը:

Որպես առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմ Հիմնարկում կիրառում են պարբերական հաշվետվությունները, չնայած որ դրանց ներկայացման հաստատված ընթացակարգերը և ձևաչափերը բացակայում են: Յուրաքանչյուր ժամանակահատվածի ավարտին (երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ) իրականացվում է արդյունքների ամփոփում, ինչը Հիմնարկը դիտարկում է որպես գործընթացների իրականացման մոնիտորիգ:

Ռազմավարական գործողությունների պլանի բացակայության պայմաններում յուրաքանչյուր 6 ամիսը մեկ, այնուհետ՝ ամեն տարվա վերջին վերլուծվում են ֆինանսական ծախսերի և ուսումնական պլանի իրականացման հարցերը: Արդյունքում որոշումներ են կայացվել տարբեր առարկայական ծրագրերում առկա կրկնությունները բացառելու, դասախոսների կողմից անցկացվող սեմինարների արդյունավետությունը բարձրացնելու և հարակից այլ հարցերի վերաբերյալ:

Բացի այդ, ուսումնական գծով պատասխանատուն կազմում է ամենամսյա հաշվետվություններ: «Իմ քայլը» հիմնադրամին ներկայացվող Հիմնարկի տարեկան աշխատանքների հաշվետվությունը կազմում է տնօրենը: Հիմնադրամի գործադիր տնօրենը հաշվետվությունը ներկայացնում է Հոգաբարձուների խորհրդին: Հիմնարկի գործունեության հաշվետվությունները ներառված են «Իմ քայլը» հիմնադրամի հաշվետվություններում որպես առանձին մաս և հասանելի են հիմնադրամի կայքէջում:

Դատողություններ: Փորձագիտական խմբի քննարկումները հանգեցրել են այն եզրակացության, որ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ռազմավարական կառավարումը ներդրման փուլում է: Այդ ուղղությամբ առաջին և դրական քայլերից է 2024-29թթ. համար մշակված «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ռազմավարություն» փաստաթուղթը:

Սակայն ռազմավարական հստակ նպատակների, ակնկալվող արդյունքների, դրանց իրականացման պատասխանատուների, գնահատման ցուցիչների բացակայության պայմաններում դժվար է գնահատել ձեռքբերումները, Հիմնարկի զարգացման միտումները,

բացթողումները և կառավարել դրանք: Փորձագիտական խումբը գտնում է, որ բոլոր շահակիցների հետ քննարկումների և աշխատաշուկայի վերլուծության արդյունքների հիման վրա պետք է սկսել ռազմավարական նպատակների հստակեցումը, որը առավել տեսանելի կդարձնի հիմնարկի՝ որպես գերազանցության կենտրոն լինելու հանգամանքը: Այնուհետ մշակել ռազմավարական ծրագիր կամ նպատակներին հասնելու ճանապարհային քարտեզ՝ հստակ ժամանակացույցով և ակնկալվող արդյունքներով: Պակաս կարևոր չէ գործողությունների պատասխանատուների և գնահատման ցուցիչների սահմանումը՝ որոշակի դարձնելու պլանավորված գործընթացների կազմակերպիչներին և առաջընթացը ցուցադրելու համար հավաքագրվող անհարաժեշտ տեղեկատվությունը:

Ճիշտ է, ներքին և արտաքին շահակիցները չեն մասնակցել հիմնարկի ռազմավարության և պլանավորված միջոցառումների մշակմանը, բայց փորձագիտական խմբի հետ հանդիպումների մասնակիցները ընդունում էին իրականացվող գործողությունների կարևորությունը և արդյունավետությունը, քանի որ կարևոր է եղել «ապահովել առնվազն լիցենզիայի թվին համապատասխան ընդունվող ուսանողների թվաքանակ» և նրանց բավարարվածությունը ուսումնառությունից: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ իրականացվող գործընթացների վերաբերյալ շահակիցների տեղեկացման և նրանց հետ հետադարձ կապի մեխանիզմների ակտիվացման և նորերի ներդրման կարիք կա: Առանձնապես պետք է կարևորել հնարավոր գործատուների հետ կապը, քանի որ հաստատությունն էլ իր թույլ կողմերում նշում է, որ շրջանավարտների համար «աշխատանքի ձեռքբերման անորոշությունը կարող է բերել ուսանողների մասնակցության դեֆիցիտի»:

«Իմ քայլը» հիմնադրամի առաքելության ձևակերպման մեջ կրթությանը վերաբերող մասը բավարար հստակ չի. այն ընդգրկում է «հանրակրթականից մինչև ակադեմիական ոլորտ», իսկ Հիմնարկի ռազմավարության մեջ, որպես կրթական ծառայություններ մատուցող կառույցի, առաքելությունը ընդհանրապես ձևակերպված չէ: Հստակ է, որ իրականացվող կրթական ծրագիրը համապատասխանում է ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի պահանջներին: Փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը իր ռազմավարական փաստաթղթերում նախ և առաջ պետք է անդրադառնա իր գործունեության երկարաժամկետ տեսլականին, որը կարտացոլի այն տեղն ու դիրքը, որն ապագայում ցանկանում է զբաղեցնել Հիմնարկը կրթության տեղական և միջազգային շուկաներում: Այնուհետ անհրաժեշտ է մշակել և բոլոր շահակիցներին հասանելի դարձնել գերազանցության ընկալման, կրթական ծրագրի և շրջանավարտների առանձնահատկությունները շեշտադրող առաքելությունը, որն ընդունելի կլինի բոլոր շահակիցների կողմից և կդառնա գործունեության ուղեցույց:

Փորձագիտական խմբին հասանելի փաստաթղթերից միայն Ինքնավերլուծության մեջ են հստակեցված «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ներքին և արտաքին շահակիցների հիմնական խմբերը, մինչդեռ ցանկալի է, որ այդ հստակեցումը կատարվի հենց շահակիցներին հասանելի որևէ ռազմավարական փաստաթղթում:

Եթե ուսանողների, որպես կենտրոնի հիմնական շահակիցների, կարիքները որոշ առումով վեր են հանվում հարցումների միջոցով, ապա ներքին և արտաքին շահակիցների մյուս խմբերի կարիքների վերհանման կառուցակարգեր դեռևս ներդրված չեն: Հիմնարկի առաքելության, նպատակների և Ռազմավարական ծրագրի մշակման ժամանակ բոլոր շահակիցների կարիքների հաշվի առնելու, տարբեր գործընթացներում դրանց ներգրավելու

դեպքում՝ կմեծանա նրանց ակտիվությունը և պատասխանատվությունը այդ նպատակների իրականացման համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը առաջնորդվում է կրթության ոլորտում «Իմ քայլը» հիմնադրամի առաքելությամբ, իրականացնում է ՀՀ ՈԱՇ 7-րդ մակարդակի կրթական ծրագիր, հիմնարկում ներ է դրվում ռազմավարական կառավարման մոտեցումներ, «Իմ քայլը» հիմնադրամի ռազմավարությանը համահունչ մշակվել է մոտակա 5 տարիների համար ռազմավարություն՝ ծրագրային երեք ուղղություններով և միջոցառումներով, հանդիպումներին մասնակից ներքին և արտաքին շահակիցները ընդունում են Հիմնարկի նպատակներն ու գործունեությունը համարում արդյունավետ, կիրառում են պարբերական հաշվետվությունները որպես առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմ, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը բավարարում է 1-ին չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Իմ քայլը» հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Ըստ փորձագիտական խմբին ներկայացված կառուցվածքի՝ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի կառավարման մարմիններն են.

- «Իմ քայլը» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը,
- «Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրենը,
- Հիմնարկի տնօրենը:

Կառավարման գործառույթները իրականացվում են որոշակի վերադասությամբ.

«ԻՄ ՔԱՅԼԸ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հաստատում է ռազմավարությունը, ծրագրերը, բյուջեն, ինչպես նաև նշանակում հիմնադրամի գործադիր տնօրեն, որը հաշվետու է ամբողջ հիմնադրամի, այդ թվում՝ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի գործունեության համար:

Հիմնադրամի գործադիր տնօրենը իրականացնում հիմնադրամի ընթացիկ կառավարումը և աշխատանքի է ընդունում ստորաբաժանման ղեկավարներին՝ այդ թվում Հիմնարկի ղեկավարին: Գործադիր տնօրենի տարեկան հաշվետվության մեջ բաժին կա, որը նվիրված է Հիմնարկի գործունեությանը:

Հիմնարկի տնօրենը իրականացնում է Հիմնարկի ընթացիկ ղեկավարումն ու աշխատանքների կազմակերպումը. նրա իրավասությունները սահմանված են Հիմնարկի կանոնադրությամբ: Նա տարեկան գործունեության և ֆինանսական հաշվետվություն է տալիս Հիմնադրամի գործադիր տնօրենին:

Հիմնարկի կառուցվածքում գործում է գիտական խորհուրդ, որը համարվում է խորհրդատվական մարմին, սակայն միևնույն ժամանակ, ըստ կանոնադրության, որոշումներ կայացնելու իրավասություններ ունի: Փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ Գիտխորհուրդը ուսումնական և գիտական աշխատանքների բովանդակային մասի համար է պատասխանատու, ուսումնասիրում և հաստատում է մագիստրոսական թեզերի թեմաները, առաջարկում է դասախոսներին: Կրթական ծրագրի մասով Գիտխորհրդի առաջարկները տնօրենի կողմից չեն մերժվում, սակայն կառավարչական մասով առաջարկների մերժումներ լինում են: Մերժումները չեն դիտարկվում կառավարման էթիկայի խախտում, քանի որ դրանք տեղի են ունենում քննարկումներից հետո: Տնօրենը վերահսկում է նաև Գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքը:

Իր կառուցվածքում «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը այլ ստորաբաժանումներ չունի: Վարչական գործառույթներ իրականացնելու նպատակով աշխատում են նաև 1 ուսումնական գծով պատասխանատու և 1 լաբորանտ, որոնց գործառույթները սահմանված են պաշտոնի անձնագրերով: Ընտրված կառուցվածքի՝ ռազմավարական նպատակներին համապատասխանության վերլուծություն չի կատարվել Հիմնարկի կողմից, գործող կառավարման համակարգի արդյունավետությունն էլ չի ուսումնասիրվել:

Վարչական աշխատակիցները ապահովված են նյութական ռեսուրսներով (աշխատանքային տարածքով՝ «ԻՄ ՔԱՅԼԸ» հիմնադրամում և ԵՊՀ-ում վարձակալած տարածքներում, համակարգչային տեխնիկայով, համացանցային կապով և այլն):

Առանձին մշակված ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն Հիմնարկը չունի, ֆինանսական հարցերը բանավոր քննարկվում են Հիմնադրամի ֆինանսիստի հետ: Յուրաքանչյուր տարի ուսումնական ամբողջ ժամանակաշրջանի համար կազմվում է ծախսերի նախահաշիվ, որտեղ հիմնական կետերն են աշխատավարձերը, դասախոսական կազմի տեղափոխման և կեցության, տեխնիկական միջոցների ձեռքբերման, վերանորոգումների և այլ ծախսերը: Յուրքանչյուր ամիս Հիմնարկի տնօրենը Հիմնադրամի տնօրենի հաստատմանն է ներկայացնում զեկուցագիր ակնկալվող ֆինանսական ծախսերի մասին, որոնք տրամադրվում են Հիմնադրամի կողմից:

Ընտրված կառուցվածքի և հատկացվող ֆինանսական ռեսուրսների տնօրինման արդյունավետության գնահատման խնդիրը Հիմնարկն իր առջև առայժմ չի դնում:

Ինքնավերլուծության մեջ և փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ Հիմնարկի կառավարիչները կարևորում էին շահակիցների անմիջական մասնակցությունը կառավարման գործընթացներին և որոշումների ընդունման հարցում: Սակայն փաստացի վիճակն այն է, որ Հիմնարկի գործող կառուցվածքը քիչ հնարավորություններ է ստեղծում շահակիցների համար մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը: Գիտական խորհրդի աշխատանքներում ընդգրկված չեն ոչ ուսանողներ, ոչ էլ արտաքին շահակիցներ:

Որոշումներ կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող ընթացակարգերը բացակայում են: Պլանավորվում է մշակել համապատասխան քաղաքականությունը:

Ուսանողական հարցումներն են դիտարկվում որպես կառավարմանը մասնակցության մեխանիզմ. վերլուծության արդյունքները հաշվի են առնվում ղեկավար կազմի կողմից հաջորդ տարում որոշումներ կայացնելիս, օրինակ՝ դասախոս ներգրավելիս:

Դասախոսների կողմից անձնական շփումների միջոցով արձանագրվող խնդիրները լուծվում են Գիտական խորհրդի և Հիմնարկի տնօրենի միջոցով:

Թե ինչ չափով են արդյունավետ որոշումներ կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության կիրառվող այս մոտեցումները, ինչ չափով են նրանք բավարարված իրենց ներգրավվածությունից՝ հիմնարկը դեռևս չի վերլուծում:

Ըստ ինքնավերլուծության՝ Հիմնարկի գործունեության պլանավորումը կատարվում է ««Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի ռազմավարություն» փաստաթղթի հիման վրա, որտեղ «ըստ յուրաքանչյուր կետի մշակված են երկարաժամկետ (5 տարի), միջնաժամկետ (2 տարի) և կարճաժամկետ (մինչև 1 տարի) ծրագրերը»: Պլանավորման ներկայացված ժամանակահատվածները փաստացի չեն համապատասխանում ռազմավարության մեջ նշված ժամանակահատվածներին. ճիշտ է, ռազմավարությունը մշակված է 2024-29թթ. համար, բայց փաստաթղթում երկարաժամկետ պլանավորում է համարվում 1 տարվա, միջնաժամկետ՝ 6 ամսվա, կարճաժամկետ՝ 3 ամսվա համար իրականացված պլանավորումը: Փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ Հիմնարկի կառավարիչները նշեցին, որ «պլանավորում կատարվում է յուրաքանչյուր տարվա կտրվածքով»: Սակայն բացի վերոհիշյալ ռազմավարությունից՝ փորձագիտական խմբին չտրամադրվեց որևէ ժամանակահատվածի համար նախատեսված ծրագիր կամ գործողությունների պլան:

Տարվա վերջին պատրաստվում է հաշվետվություն, որով ամփոփվում են կատարված աշխատանքները. ամփոփող նիստի մասնակիցներին որոշում է Հիմնարկի տնօրենը: Այս ամփոփումը Հիմնարկի կողմից դիտարկվում է որպես և՛ արդյունքների գնահատում, և՛ մշտադիտարկում: Հաշվետվությունների միջոցով Հիմնարկը «իր ստեղծած մարմիններին պարբերաբար ներկայացնում է ընթացիկ բյուջեն, ինֆորմացիա պլանային քաղաքականության ընթացքի մասին, ինչպես նաև գրանցած արդյունքների տվյալները»:

Հիմնարկը կարևորում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը և տվյալների վերլուծության հիման վրա որոշումների կայացումը: Արտաքին ազդող գործոններից դիտարկվում են Կրթական բնագավառում պարբերաբար իրականացվող առկա օրենքների փոփոխությունները, իսկ ներքին տվյալներ հավաքում են՝

- ուսանողների կողմից դասախոսների աշխատանքի գնահատումներից,
- ուսանողների ու դասախոսների հետ տեղի ունեցող պարբերաբար քննարկումներից,
- ուսումնական տարվա մեկնարկից առաջ ֆինանսական միջոցների ստուգումներից:

Հիմնարկի կառավարիչները հավաստեցին, որ անցած երկու տարիներում Հիմնարկի գործունեությունը շարունակվել է բնականոն հունով, և իր գործունեության վրա ազդող էական գործոններ Հիմնարկը չի արձանագրել, ուստի լրացուցիչ վերլուծությունների կարիք չեն տեսել:

«Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի կառավարման և վարչարարության որակի ապահովման հաստատված քաղաքականությունը և ընթացակարգերը մշակված չեն: Բացի ինքնավերլուծությունից՝ փորձագետներին չի ներկայացվել որևէ փաստաթուղթ, որում ամրագրված է որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքի (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) կիրառման պահանջը Հիմնարկում իրականացվող գործընթացների համար:

ՊԻԳԲ սկզբունքի սեփական մեկնաբանությունը, ինչը ներկայացված է ինքնավերլուծության մեջ, տարբերվում է ընդունված մոտեցումներից: Կառավարման

շրջափուլը սկսվում է խնդիր-անելիքի վերհանման փուլից: Պ - պլանավորում է դիտարկվում «որոշման նախագծի /հրամանի/ մշակում, ընդունում և հրապարակումը», Ի-իրականացում՝ ինչ-որ «ստորաբաժանման կամ աշխատակցի կողմից հրամանով ամրագրված լուծման իրականացումը», Գ-գնահատում՝ «կատարված աշխատանքի վերլուծության ու մոնիթորինգի ընթացքում գնահատվում է արդյունքը»: «Բարելավում» փուլի բացակայության պայմաններում կտրվում է շրջափուլի շղթան, ինչը պետք է ապահովեր շարունակական բարելավման գործընթացը:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ «մշակվում են խնդիրների լուծման և գործընթացների բարելավմանն ուղղված քայլեր, որոնք ներառվում են հաջորդ տարվա պլանավորման մեջ» կամ «հիմնարկի տնօրենն իրականացնում է պլանավորման աշխատանքներ, դիտարկելով ռիսկերի կանխատեսման սցենարներ», սակայն գործընթացները չեն փաստաթղթավորվում:

Թե ինչ չափով է ՊԻԳԲ սկզբունքի սեփական ընկալման կիրառումը նպաստում կառավարման արդյունավետությանը և որակի ապահովմանը՝ Հիմնարկը դեռևս չի վերլուծում:

Հիմնարկի կողմից իրականացվող մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետության գնահատման համար կիրառվում են հետևյալ մեխանիզմները՝

- ուսանողների շրջանում գրավոր հարցումների անցկացում «Դասընթացի գնահատման հարցաթերթի» միջոցով,
- հանդիպումների և քննարկումների ժամանակ ուսանողների առաջարկների հավաքագրում:

«Դասընթացի գնահատման հարցաթերթի» միջոցով տեղեկատվություն է հավաքվում նաև դասախոսական կազմի մասին:

Հիմնարկը նշում է, որ դասախոսների կողմից տրամադրվող տեղեկություն հավաքագրվում է գիտական խորհրդի նիստերի և վերջինիս հետ խորհրդակցությունների ժամանակ, սակայն նման տեղեկատվության վերլուծություններ փորձագիտական խմբին չեն տրամադրվել:

Հիմնարկը չի վերլուծում կրթական ծրագրի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը, գտնելով, որ «տեղեկությունների հավաքագրման և գնահատման համակարգը արդյունավետ է, քանի որ իրականացվում են անանուն»:

Հիմնարկը տեղեկատվությունը տարածում է ուսանողների հետ հանդիպումների ժամանակ, ԶԼՄ-ներով տարածվող, Հիմնադրամի կայքում և Հիմնադրամի սոցիալական ցանցերի էջերում տեղադրվող նյութերի միջոցով:

Հիմնադրամի կայքէջի՝ Հիմնարկին հատկացված բաժնում պարբերաբար տեղադրվում է տեղեկատվություն կրթական ծրագրի և արտերկրից հրավիրված դասախոսների մասին, ինչպես նաև հրապարակվում է հարցազրույցների շարք ուսանողների հետ, որտեղ վերջիններս ներկայացնում են կրթական ծրագիրը, դասավանդման որակը և այլն: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք ավելի շատ մարքեթինգային և գովազդային հրապարակումներ են, այլ ոչ ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվություններ:

Տրամադրված որակական և քանակական տեղեկատվության արդյունավետությունը Հիմնարկը գնահատում է երկրորդ տարին անընդմեջ 15 ուսանողի ընդունելությամբ:

Փորձագիտական այցի հանդիպումների մասնակից ուսանողները նշեցին, որ Հիմնարկի մասին իմացել են համալսարանում՝ իրենց ընկերներից:

Հիմնարկի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը փաստացի չի գնահատվում:

Դատողություններ: «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկը ունի ոչ տրադիցիոն բուհական կառուցվածք, և կիրառվում են յուրահատուկ մոտեցումներ: Փոքր անձնակազմին բնորոշ առավելություններով հանդերձ (մոբիլություն, կառավարման ուղիղ կապեր, բյուջեի խնայողություն և այլն), ձևավորվել է մի իրավիճակ, երբ նույն աշխատակիցը իրականացնում է մի քանի գործառույթներ, որոշ դեպքերում անխուսափելիորեն առաջացնելով շահերի բախում (օրինակ, ուսումնական գործընթացների պատասխանատուն նաև որակի ապահովման պատասխանատուն է): Որոշ գործընթացներ էլ չեն իրականացվում բավարար մակարդակով մարդկային ռեսուրսների պակասի պատճառով (օրինակ՝ որակի ապահովում, միջազգային կապերի համակարգում): Փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը պետք է վերլուծի իր կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական նպատակներին և դիտարկի անձնակազմի ավելացման հարցը:

Կառավարման հիմնական որոշումները փաստացի կայացնում է Հիմնարկի տնօրենը, քանի որ Գիտական խորհուրդը խորհրդատվական մարմին է համարվում: Բացի այդ, ինքնավերլուծությունում նշված է, որ Գիտական խորհրդի առաջարկները կարող են մերժվել տնօրենի կողմից, որը չի դիտարկվում կառավարման էթիկայի խախտում (էթիկայի կամ բարեվարքության կանոններ Հիմնարկում դեռևս մշակված չեն): Կառավարման կոլեգիալությունը ապահովելու տեսակետից նպատակահարմար կարող է լինել Գիտական խորհուրդի կարգավիճակի փոփոխությունը և այն կառավարման մարմնի վերափոխումը:

Դրական է, որ Հիմնարկն ունի համապատասխան ֆինանսական միջոցներ իր կրթական և մյուս գործընթացները կազմակերպելու համար: Սակայն ֆինանսների կառավարման քաղաքականություն Հիմնարկը չի մշակել, քանի որ ֆինանսների տնօրինման արդյունավետության գնահատման խնդիրը իր առջև չի դրել: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է «Իմ քայլը» հիմնադրամի հետ համատեղ ներդնել նման քաղաքականություն, որը հնարավորություն կընձեռի իրականացնելու նաև ֆինանսական երկարաժամկետ պլանավորում՝ ապահովելու նաև վերանայման ենթակա ՌԾ նպատակների թիրախային իրականացումը:

Դրական է, որ Հիմնարկը ձգտում է լինել թափանցիկ կառավարում իրականացնող ուսումնական հաստատություն և կարևորում է շահակիցների անմիջական մասնակցությունը կառավարման գործընթացներին և որոշումների ընդունման հարցում: Սակայն Հիմնարկի գործող կառուցվածքը փաստացի զրկում է շահակիցներին այդ հնարավորությունից, ինչը փորձագիտական խմբի կարծիքով թույլ կողմ է Հիմնարկի համար: Խնդիր է նաև որոշումներ կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը, ինչը կառավարումը կդարձներ իսկապես թափանցիկ և մասնակցային, կմեծացներ ներքին շահակիցների պատասխանատվությունը որոշումների կյանքի կոչման տեսակետից:

«Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական կենտրոնի ռազմավարություն» ծրագրային փաստաթղթից բացի գործունեության որևէ տեսակի պլանի,

ինչպես նաև մոնիտորինգի կանոնակարգված մեխանիզմների բացակայությունը փորձագիտական խումբը համարում է Հիմնարկի թույլ կողմ, քանի որ դա նշանակում է առաքելության և նպատակների իրականացման կարևոր գործիքակազմի բացակայություն:

Եթե իրականում Հիմնարկը կարևորում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը և որոշումներ կայացնելիս հավաստի տվյալների վրա հիմնվելը, ապա փորձագիտական խմբի դիտարկմամբ պետք է համակարգի իր գործունեությունը այդ ուղղությամբ: Կարիք կա վերհանելու արտաքին և ներքին միջավայրերի այն գործոնների ցանկը, որոնք ազդում են Հիմնարկի գործունեության վրա և իրականացնել այդ գործոնների (աշխատաշուկայի, տեխնոլոգիաների զարգացման, ժողովրդագրական փոփոխությունների և այլն) բազմակողմանի վերլուծություն: Բացի այդ պետք է իրականացնել անհրաժեշտ տվյալների ստացման աղբյուրների ցուցակագրում:

Ներկա պահին հավաքագրվող տվյալների ցանկը և քանակը, փորձագիտական խմբի դիտարկմամբ, թույլ չեն տալու վերլուծությունների հիման վրա կայացնել պլանավորման հիմնավորված փոփոխություններ:

Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը վարչարարության մեջ կարող է ապահովել շարունակական բարելավման գործընթացը: Փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը պետք է փաստաթղթային հաստատի այդ սկզբունքով առաջնորդվելու պահանջը՝ հստակեցնելով «բարելավում» փուլի կարևորությունը որպես պլանավորման գործընթացին նախորդող արդյունքների վերլուծության և փոփոխությունների առաջարկների հիմնավորման փուլ:

Հիմնարկը հավաքագրում և վերլուծում է որոշակի տեղեկատվություն դասընթացների և դասավանդման որակի վերաբերյալ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ հավաքագրվող տեղեկատվությունը ամբողջական չէ կրթական ծրագրի գնահատման համար: Ծրագրի որակի գնահատումը կարելի է դիտարկել ՀՀ Մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների տեսակետից (ՀՀ կառավարության 2011թ. Հունիսի 30-ի թիվ 959-Ն որոշում): Նույնն է իրավիճակը նաև կրթության կազմակերպման այլ գործընթացների դեպքում: Պետք է հաշվի առնել նաև, որ հարցումների անանուն անցկացումը չի կարող վկայել գնահատվող մեխանիզմների արդյունավետության մասին:

Դրական է, որ Հիմնարկը ակտիվ գովազդային արշավներ է կազմակերպում “Quanta” ծրագրին ծանոթացնելու, ամառային դպրոցի լուսաբանման, դասախոս-ուսանողների կարծիքների և այլ միջոցառումների վերաբերյալ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ դրան զուգահեռ շահակիցներին պետք է քանակական և որակական թարմացված և անկողմնակալ տեղեկատվություն տալ ծրագրի և շնորհվող որակավորումների որակի մասին՝ միաժամանակ գնահատելով տեղեկատվության տրամադրման կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկը չի վերլուծել կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական նպատակներին, ներքին շահակիցները մասնակից չեն իրենց վերաբերյալ որոշումների կայացմանը, առկա չէ ֆինանսների տնօրինման հաստատված հստակ քաղաքականություն, առկա են խնդիրներ երկարաժամկետ և միջաժամկետ պլանավորման հետ կապված, պլանների իրականացման մշտադիտարկման հստակ մեխանիզմներ չեն գործում, կառավարչական տարբեր գործընթացներում ներդրված չէ

ՊԻԳԲ շրջափուլը, ծրագրի գնահատման և որոշումների կայացման համար չեն հավաքագրվում ու վերլուծվում բավարար տվյալներ, չեն գնահատվում ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը չի բավարարում 2-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Իմ քայլը» հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի կողմից ստեղծված «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը 2022 թ. նախաձեռնել է “Quanta” «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի» մեկուկես տարվա մագիստրոսական կրթական ծրագրի իրականացումը:

Մագիստրոսական կրթական ծրագիրը մշակվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ինժեներաֆիզիկական ինստիտուտի, ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի և Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ընդհանուր ֆիզիկայի և քվանտային նանոկառուցվածքների ամբիոնի պրոֆեսորների հետ կողմից: Կրթական ծրագիրը յուրահատուկ է իր բնույթով, քանի որ առաջին անգամ է իրականացվում ՀՀ-ում: Կրթական ծրագիրը համապատասխանում է «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի առաքելությանը այն տեսակետից, որ ծրագիրը նպատակուղղված է ՀՀ-ում ձևավորել այնպիսի ուղղություններով մարդկային կապիտալ, որոնք հիմք են տեխնոլոգիական առաջընթացի համար, մասնավորապես՝ քվանտային ֆիզիկայի ոլորտի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի» կրթական ծրագիրն իր յուրահուկ նշանակությունն ունի, քանի որ ուսանողները ծրագրի շրջանակներում ուսումնասիրում են այնպիսի թեմաներ և ուղղություններ, որոնք ՀՀ-ում դեռևս խորը հետազոտված չեն, օրինակ՝ ատոմային օպտիկա, գրաֆենային ֆիզիկա, քվանտային կրիպտոգրաֆիա և այլն: Այս կրթական ծրագրի արդյունքում ուսանողները ձեռք են բերում մասնագիտական տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ քվանտային ֆիզիկայի և ֆոտոնիկայի բնագավառներից: Ծրագիրը ներառում է տեսական և կիրառական հատված, մեծ ուշադրություն է դարձված հետազոտական բաղադրիչին:

ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է ըստ ակնկալվող վերջնարդյունքների 3 բաժինների՝

- Մասնագիտական գիտելիք և իմացություն,
- Գործնական մասնագիտական կարողություններ,
- Ընդհանրական/փոխանցելի/ կարողություններ:

Մագիստրոսական ծրագրի առարկայացանկում ներառված են ծրագրի բովանդակությանը համապատասխանող ժամանակակից դասընթացներ, որոնք

ներկայացվում են համապատասխան բնագավառի բարձր որակավորում ունեցող դասախոսների կողմից: Առարկայական նկարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կազմված են միասնական ձևաչափով, որտեղ նկարագրված են վերջնարդյունքները, առարկայի նպատակը և խնդիրները, տեղն ու դերը մասնագիտական կրթական ծրագրում, պարապմունքների ձևերը, ուսումնսիրվող թեմաները, առաջարկվող գրականությունը: Փորձագիտական խմբի դիտարկումների արդունքում վեր են հանվել նաև առանձին խնդիրներ կապված նկարագրերի հետ. դրանցում ներառված չեն գնահատման ձևերը և չափանիշները, որոշ առարկաների մասնագրերում առանձին կետեր լրացված չեն, նկարագրերը չափազանց հակիրճ են, մասնագրերից մեկում հիմնական գրականություն ընդհանրապես նշված չէ:

2024 թվականին ծրագիրը տվել է իր առաջին շրջանավարտներին: Ծրագիրն իրականացնող խմբի հետ հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ նախատեսվում է իրականացնել արդյունքների գնահատում, որպեսզի շտկումներ կատարվեն ծրագրում: Հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ ծրագրի իրականացման ընթացքում ևս կարևորվել է խնդիրների բացահայտումը և դրանց ընթացիկ լուծումներ տալը: Մասնավորապես, հաշվի առնելով ուսանողների բազային գիտելիքները ֆիզիկայի ուղղությամբ, փոփոխություններ են կատարվել դասընթացների հերթականության մեջ, ինչպես նաև ավելի լայն ու խորը գիտելիք փոխանցելը համադրվել է մատչելի և նեղ մասնագիտական գիտելիքների հետ, այնպես որ ուսանողները ինքնուրույն աշխատանքների միջոցով կարողնան ձեռք բերել համակարգային գիտելիքներ և կարողություններ քվանտային ֆիզիկայի ոլորտում:

Կրթության կազմակերպման Հիմնարկի քաղաքականությունը հիմնված է դասական հիմնարար կրթության վրա՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Կրթական ծրագրի շրջանակներում բացի դասական դասախոսություններից, որը արտասահմանից ժամանած դասախոսների դեպքում տևում է մեկ-երկու շաբաթ, կիրառվում են նաև գործնական և լաբորատոր պարապունքներ: Դասախոսները մշտապես կապի մեջ են ուսանողների հետ էլեկտրոնային փոստի միջոցով:

Ծրագրի շրջանակներում առկա չէ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, սակայն դասախոսները, լինելով բարձր որակավորում ունեցող գիտնականներ և պրակտիկ ոլորտի մասնագետներ կիրառում են դասավանդման և ուսումնառության մեթոդներ, որոնք համապատասխան են դասընթացների սահմանված վերջնարդյունքերին: Մեթոդները ներառում են դասախոսություններ, ցուցադրումներ, թեմատիկ քննարկումեր, ինքնուրույն աշխատանքների ներկայացումներ, խնդիրների լուծումներ գործնական պարապմունքների ժամանակ, սեմինարներին ելույթներ, լաբորատոր փորձերի ուսումնասիրում և ներկայացում: Մեթոդները վերանայվում են հիմնվելով ուսանողների շրջանում հարցումների և դրանց վերլուծության արդյունքների վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները ուսանողներին հանձնարարում են այնպիսի առաջադրանքներ, որոնք միտված են հետազոտական հմտությունների զարգացմանը: Օրինակ՝ ատասահմանցի դասախոսները հանձնարարում են առարկայի թեմաների շրջանակներում ուսումնասիրել գիտական հոդվածներ և պատրաստել ակնարկներ դրանց շուրջ, ինչպես նաև քննարկել և անգլերենով ներկայացնել արդյունքները սեմինարների ժամանակ:

Ուսանողները որոշ լաբորատոր աշխատանքներ և հաշվարկներ իրականացնում են ԵՊՀ Օպտիկայի և ատոմային ֆիզիկայի ուսումնական և Հայ-Ռուսական համալսարանի քվանտային նանոֆոտոնիկայի լաբորատորիաներում:

Դասախոսությունների նյութերը ուսանողներին տրամադրվում է նախապես՝ Կենտրոնի ուսումնական գծով պատասխանատուի միջոցով:

Ուսանողների գնահատման մոտեցումներն ու ընթացակարգը ներառված են Հիմնարկի՝ մագիստրոսական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում: Ուսանողի գնահատականն ամփոփվում է կիսամյակը մեկ անգամ՝ ընթացիկ ստուգման և ամփոփիչ քննության բաղադրիչների հիման վրա: Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասընթացների ծրագրերում չկան գնահատման ձևերը, բաղադրիչները և չափանիշները: Դասախոսներն իրենք են ընտրում գնահատման բաղադրիչները և չափանիշները կախված առաջադրանքի բնույթից: Պրակտիկան, ըստ ուսումնական պլանի, նախադիպլոմային է և իրականացվում է տեսական ուսուցմանը զուգահեռ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ լաբորատորիաների պակասի պատճառով, ուսանողները ներկայումս չունեն հնարավորություն առավել երկար ժամանակահատվածով կիրառական հետազոտությունների իրականացման համար: Դասախոսական կազմն էլ ոչ արդյունավետ է համարում կարճ ցիկլային դասապրոցեսի դեպքում ուսանողների միջանկյալ գնահատման կիրառվող պրակտիկան:

Ամփոփիչ ատեստավորման իրականացման համար բոլոր գործընթացները կանոնակարգված են: Թեզերի թեմաները 1-ին կիսամյակի առաջին ամսվա ընթացքում ներկայացնում են դասավանդող դասախոսները, իսկ հաստատվում է գիտխորհրդի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրի մշակող խումբը կարևոր է համարում թեզերի թեմաների արդիականությունը, և դրանք մշակվում են արտասահմանցի դասախոսների հետ համագործակցությամբ: Թեզի կատարումը վերահսկվում է որոշակի սահմանված փուլերի ավարտին կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա՝ սահմանված ժամանակացույցով: Յուրաքանչյուր մագիստրոս ունի գիտական ղեկավար, ում հետ իրականացնում է գիտահետազոտական աշխատանք՝ նախապատրաստելով մագիստրոսական ատենախոսությունը, որը հետագայում նախատեսվում է տպագրել գիտական հոդվածի տեսքով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ որոշ աշխատանքներ ուղարկված էին հրապարակման, իսկ մի մասը դեռ ընթացքի մեջ էին: Հոդվածներից երկուսը ուղարկված էր տպագրության միջազգային ամսագրեր: Ակադեմիական ազնվության հիմնական վերահսկողը դասախոսներն են, ովքեր ղեկավարում են ուսանողների հետազոտական աշխատանքը: Դրան նպաստում է նաև արտաքին գրախոսության կազմակերպումը:

«Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» կրթական ծրագրի մշկաման հիմքում եղել են Երևանի պետական համալսարանի և Սանկտ Պետերբուրգի պետական պոլիտեխնիկական համալսարանի կրթական ծրագրերի ուսումնասիրությունները: Ներկայումս առկա չէ ուսանողների պաշտոնական շարժունություն համաձայնագրերի բացակայության պատճառով:

Ծրագրի շրջանակներում առկա է հետադարձ կապ ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների կողմից: Յուրաքանչյուր կիսամյակ անցկացվում եմ հարցումներ ուսանողների շրջանում: Դրանցում ուսանողները գնահատում են դասընթացի կարևորությունը մասնագիտական զարգացման տեսանկյունից, ուսուցման մեթոդները, հետազոտական

բաղադրիչը, դասընթացի հասանելիությունը, լսարանային պայմանները: Անհրաժեշտության դեպքում իրականացվում են մեթոդների բարելավման միջոցառումներ: Կենտրոնի գիտական խորհուրդը քննարկում է դասախոսների հետ առաջացած խնդիրները կրթական ծրագրի բովանդակության հետ կապված և անհրաժեշտության դեպքում կատարում փոփոխություններ: Օրինակ, ուսումնասիրելով ուսանողների խնդիրները՝ ավելացել է քվանտային մեխանիկայի հիմունքներին հատկացված ժամաքանակը:

Դատողություններ: Ուսումնասիրելով կրթական ծրագրի բովանդակությունն ու դրա իրականացումը, փորձագիտական խումբը դրական է գնահատում կրթական ծրագրի բացառիկությունը, որն ամբողջությամբ համապատասխանում է հաստատության առաքելությանը՝ «նպաստել ՀՀ-ում մարդկային կապիտալի զարգացմանը»: Ծրագրի հիմնական դրական առանձնահատկություններից է ուսանողների ինտեգրումը միջազգային գիտական խմբերում՝ աշխարհի առաջատար գիտնականների հետ հաղորդակցման միջոցով. սա արտացոլում է ծրագրի միջազգային բնույթը և հնարավորություններ է ստեղծում շարժունության համար: Ծրագրի մյուս դրական արդյունքը ձեռնարկություններին և գիտահետազոտական ինստիտուտներին մասնագետներով ապահովելն է, քանի որ այն կառուցված է՝ տեսություն- փորձ- տեխնոլոգիա շղթայով:

Կրթական ծրագրի առանցքային առանձնահատկություններից է ոչ թե «երեկվա» օպտոէլեկտրոնիկայի մասնագետների պատրաստումը հին դասագրքերով, այլ ժամանակակից քվանտային ֆիզիկայի մասնագետների պատրաստումը «վաղվա» համար՝ ժամանակակից գիտության վերջին նվաճումներով: Առանձին պետք է նշել ծրագրի ներդրման և իրականացման քաղաքականության նպատակներից մեկը՝ ուղղված Հայաստանի մտավոր կապիտալի պահպանմանն ու «ուղեղների արտահոսքի» կասեցմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում են բացառիկ ուղղություններ, որոնք կնպաստեն շրջանավատներին այնպիսի գիտելիքներերով և հմտություններով ապահովելուն, որոնք այսօր արդիական են: Դրական է, որ դասախոսները կիրառում են ուսուցման բազմազան մեթոդներ՝ նպաստելու, մասնավորապես, ուսանողների հետազոտական հմտությունների ձեռքբերմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում դասախոսների հետ դասավանդման մեթոդների վերաբերյալ փորձի փոխանակման քննարկումների կազմակերպումը, ինչը կնպաստի միասնական քաղաքականության մշակմանը և լավ փորձի տարածմանը: Կարևոր է նաև միասանական էլեկտրոնային հարթակի ստեղծումը, որը հնարավորություն կտա դասախոսներին ծանոթանալ միմյանց կողմից տրվող նյութերին և կստեղծի ուսանողների հետ հաղորդկացման առավել լայն հնարավորություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում թեզերի արդիական թեմաների ընտրությունը և դրանց հետազոտական ուղղվածությունը, որի արդյունքում ուսանողների մոտ ձևավորվում են վերլուծական կարողություններ: Դրական է, որ թեզերի արդյունքները դառնում են հոդվածներ՝ նպաստելով գիտական արդյունքների հանրայնացմանը:

Դրական է, որ Հիմնարկում ամփոփիչ ատեստավորման իրականացման և որակավորման շնորհման գործընթացները կանոնակարգված են, իսկ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում ներառված են ուսանողների գնահատման մոտեցումներն ու ընթացակարգը: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսների կողմից ընտրված գնահատման ձևերը, բաղադրիչները և չափանիշները պետք է նախօրոք հրապարակված լինեն դասընթացների ծրագրերում և հասանելի լինեն

ուսանողներին: Պրակտիկայի ծրագիրը և գնահատման չափանիշները նույնպես հստակեցման կարիք ունեն:

Արտասահմանյան դասախոսների դասավանդումը իրականացվում է ՀՀ այցելության համեմատաբար կարճ ժամկետներում: Նկատի ունենալով, որ առարկայական ծրագրերում ներառված են արդի գիտության վերջին ձեռքբերումները, և դրանց յուրացումը պահանջում է նախնական գիտելիքների նշանակալի հենք և ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ այցերի սեղմ ժամկետները որոշակի դժվարություններ են ստեղծում առարկաների խորը յուրացման և ուսանողների միջանկյալ գնահատումների համար, ինչի մասին բարձրաձայնեցին նաև փորձագիտական հանդիպումների մասնակից դասախոսները և ուսանողները: Անհրաժեշտ է մշտական և առօրեական դարձնել դասախոսների հետ ուսանողների հաղորդակցումը: Առարկաների հիմնական մասը ունի նաև տեխնոլոգիական և կիրառական ուղղվածություն, և կարևոր խնդիր է լաբորատար հենքի ընդլայնումը ՀՀ գիտական կենտրոնների և բուհերի հետ համագործակցության միջոցով:

Փորձագիտական խումբը նշում է նաև, որ կրթական ծրագրի այս սկզբնական փուլում կարևոր է շրջափուլի արդյունավետության գնահատումը, որը կներառի ինչպես դասախոսների հետ քննարկումները, այնպես էլ ավարտական հանձնաժողովի կարծիքների ուսումնասիրությունները և շրջանավատների հետ քննարկումները: Սա կնպաստի կուտակված փորձի հիման վրա թիրախային փոփոխությունների իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ յուրահատուկ մասնագիտության կրթական ծրագիրը կազմված է գերազանցության սկզբունքի վրա՝ ներառելով այնպիսի առարկաներ, որոնք առաջին անգամ են իրականացվում ՀՀ-ում, ծրագրի մշակմանը ներգրավված են եղել ոլորտի միջազգային ճանաչում ունեցող մասնագետներ, ծրագիրը համահունչ է հաստատության առաքելությանը, կազմում է հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս, համապատասխանում է ՈԱՇ-ի 7-րդ մակարդակին և ապահավում է կրթության շարունակականությունը, նկարագրված է՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, դասախոսները կիրառվում են դասավանդման, ուսումնառության գնահատման ուսանողակենտրոն մեթոդներ, առկա են շարժունության հնարավորություններ ուսանողների համար, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Իմ քայլը» հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկում ուսանողների ընտրությունը և ընդունելությունը կազմակերպվում է ըստ Հիմնարկի մագիստրատուրայի ընդունելության կազմակերպերման և հարցազույցի անցկացման կարգի: Ուսանողների ցանկալի քանակությունը ապահովելու համար սահմանված գործողություններով նախատեսվում է ուսանողների հավաքագրման,

ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմների կիրարկում: «Իմ քայլը» հիմնադրամի կայքէջում տեղադրվում է ընդունելության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը: Դիմորդները հանձնում են քննություններ՝ ֆիզիկայից և բարձրագույն մաթեմատիկայից:

Կայքում տեղադրվում են նաև քննության հարցաշարը և գնահատման կարգը, որ մինչ քննություններին մասնակցելը դիմորդները կարողանան ծանոթանալ իրենց անհրաժեշտ տեղեկատվությանը: Հիմնարկի կողմից ֆիքսվում է ընդունելության քննության ժամանակը և սկսվում է PR արշավը: Ծրագիրը ներկայացնելու նպատակով իրականացվում են այցելություն տարբեր բուհեր, որտեղ առկա են ֆիզիկամաթեմատիկական և ճարտարագիտական ուղղություններով բակալավրական ծրագրեր: Հանրային վայրերում, օրինակ մետրոյում, տեղադրվում են գովազդային պաստառներ: Կազմակերպվում են օլիմպիադա և տասնօրյա ամառային դպրոց: Ընդունելության արդյունքների մոնիթորինգը ցույց է տվել, որ օլիմպիադան արդյուանվետ չէ: Կազմակերպվող ամառային դպրոցի շրջանակներում ուսանողների համար իրականացվում են վարպետության դասեր քվանտային ֆիզիկայի ոլորտից:

Կրթական ծրագրում ուսումն անվճար է, վարձավճարը ֆինանսավորում է «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամը՝ յուրաքանչյուր ուսանողի համար տրամադրելով 1.5 միլիոն դրամ: 2024 թվականի դրությամբ Հիմնարկում ուսանել է 22 ուսանող: 2024-ին Հիմնարկը թողարկել է իր առաջին շրջանավարտներին:

Ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմերի արդյունավետությունը Հիմնարկը բավարար է համարում, քանի որ ապահովվում է նախատեսված թվաքանակով ուսանողների ընդունելությունը:

Ինքնավերլուծության մեջ ներկայացված էր, ինչը հաստատվեց նաև փորձագիտական այցի ժամանակ տեղի ունեցած հանդիպումների ժամանակ, որ ուսանողների կարիքների գնահատման համար Հիմնարկը օգտվում է դասընթացի գնահատման հարցումներից, ինչպես նաև կազմակերպում է պարբերական հանդիպումներ ուսանողների հետ: Սակայն հարցումների արդյունքների վերլուծությունը չի ներկայացվում ոչ ուսանողներին, ոչ դասախոսներին:

Փորձագիտական այցի ժամանակ տեղի ունեցած հանդիպումների ժամանակ ուսանողները նաև նշեցին, որ ադմինիստրատիվ խնդիրների դեպքում իրենք դիմում են ուսումնական գծով պատասխանատուին և Հիմնարկի տնօրենին, իսկ դասապրոցեսի հետ կապված խնդիրների դեպքում՝ անմիջապես դասախոսներին:

Հիմնարկը կարևորում է հիմնական շահակիցների՝ ուսանողների դիտարկումները ծրագրի իրականացման վերաբերյալ: Ուսանողների դիտարկումների հիման վրա մեկ դասախոսի հետ խզվել է աշխատանքային պայմանագիրը: Նրանց առաջարկով որոշում է կայացվել 2023-24 ուսումնական տարվանից սկսած դասերը սկսել 17:00-ին՝ նախկին 16:00-ի փոխարեն՝ հաշվի առնելով ուսանողների աշխատանքային ժամերի հետ դասերի համընկնումը: Փորձագիտական այցի ժամանակ տեղի ունեցած հանդիպումներից նաև պարզ դարձավ, որ ուսանողներն ու շրջանավարտները կարևորում են լաբորատոր աշխատանքների համար նախատեսված ժամաքանակի ավելացումը և պրակտիկայի ընդլայնումը:

Հիմնարկը, կարևորելով ուսանողների մասնագիտական առաջընթացը, կազմակերպել է լրացուցիչ դասընթացներ ուսանողների խնդրանքով քվանտային ինֆորմատիկա առարկայից: Դասախոսները նույնպես, հաշվի առնելով ուսանողների բազային գիտելիքները, ադապտացնում են մատուցվող նյութը ուսանողների կարիքներին՝ հարկ եղած դեպքում

մանարամասնելով նյութը: Ուսանողներն ըստ անհրաժեշտության հնարավորություն ունեն դիմելու իրենց գիտական ղեկավարին և պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ լրացուցիչ խորհրդատվության համար, նրանք բավարարված են տրամադրվող խորհրդատվություններից:

Հիմնարկը համագործակցում է մի շարք հաստատությունների հետ՝ ԵՊՀ, Հայ-ռուսական համալսարան, ԳԱԱ Ֆիզիկայի ինստիտուտ, ՀՀ ԲՏԱ նախարարություն՝ շրջանավարտների կարիերային աջակցելու նպատակով: Փորձագիտական այցի շրջանավարտների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ նախքան ավարտելը ըստ մասնագիտության նրանցից աշխատել է 15 հոգի, գործազուրկ՝ 1 ուսանող է եղել: Բացի այդ ծրագրի շրջանակներում ուսանողներին պատրաստում են նաև սեփական բիզնեսը հիմնելուն. այսպես, առաջին շրջանավատրներից չորսը հիմնել են իրենց ստարտ-ափը: Ուսանողները նաև տեղեկանում են ոլորտում իրականացվող կոնֆերանսների և սեմինարների մասին իրենց դասախոսներից: Այսպես նրանք մասնակցել են նանոֆիզիկային, քվանտային համակարգիչներին, աստղագիտությանը և սուպեր-համակարգիչներին նվիված կոնֆերանսների և սեմինարների:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մագիստրոսական ծրագրում մեծ չափաբաժին հատկացված է գիտահետազոտական բաղադրիչին: Մագիստրոսական թեզերի թեմաները և առաջադրվող խնդիրներն այնպես են ընտրվում, որ արդյունքները պարունակեն գիտական նորույթ և տպագրվեն որպես հոդվածներ՝ ինչպես անհատական, այնպես էլ դասախոսների հետ համատեղ: Առկա են դեպքեր, որ ուսանողները ներգրավվել են գիտական դրամաշնորհային ծրագրերում որպես հետազոտողներ:

Ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ֆիքսված են նրանց հետ կնքվող պայմանագրերում: Ուսանողների փոքր թվաքանակի և ղեկավար կազմի հետ անմիջական շփումների առկայության պայմաններում ուսանողների իրավունքների պաշտպանության մարմնի կարիք ոչ ուսանողները, ոչ էլ Հիմնարկի ղեկավարությունը չեն տեսնում:

Փորձագիտական այցի հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները ներդրման փուլում են: Այդ ուղղությամբ ուսումնական գործընթացի պատասխանատուն, ով միաժամանակ որակի ապահովման պատասխանատուն է, իրականացնում է հարցումներ, կազմակերպում է հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, համագործակցում է ուսանողների հետ՝ նրանց խնդիրները պարզելու նպատակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի կողմից իրականացվող միջացառումները, որոնք նպաստում են դիմորդների շրջանում ծրագրի մասին տեղեկատվության տարածմանը: Առանձնակի ուշադրության է արժանի ամառային դպրոցի կազմակերպումը, որը հնարավորություն է տալիս դիմորդներին ոչ միայն ծանոթանալ ծրագրի բովանդակությանը, այլև նախնական գիտելիքներ ձեռք բերել իրականացվող վարպետաց դասերի ժամանակ:

Դրական է, որ իրականացված գործողությունների արդյունքում հնարավոր է լինում իրականացնել ընդունելություն լիցենզիայի տեղերի չափով: Սակայն փորձագիտական խումբը

խնդիր է տեսնում այն իրավիճակում, երբ 15 ընդունվածներից 2024թ.ավարտել է ընդամենը 10[5] շրջանավարտ. այսինքն ուսումը չեն կարողացել շարունակել ընդունվածների 25%-ից ավելին: Փորձագիտական խմբի հետ հանդիպման ժամանակ դասախոսները նշեցին, որ իրենք «ծրագիրը երբեմն ստիպված են լինում հարմարեցնել ուսանողների գիտելիքների մակարդակին», ինչը չի կարելի ընդունելի համարել: Այս փաստերը ընդունելության չափանիշների վերանայման անհրաժեշտության մասին են վկայում:

Փորձագիտական խումբը դրական է գանահատում, որ ուսանողները՝ որպես կրթական ծրագրի հիմնական շահակիցներ հնարավորություն ունեն մշտապես ներկայացնելու իրենց դիտարկումները, որի արդյունքում բարելավումներ են կատարվում կրթական գործընթացներում: Փորձագիտական խումբը միևնույն ժամանակ նշում է Ուսանողի ձեռնարկ մշակելու կարևորության մասին, որը ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվություն կտրամադրի Հիմնարկի գործունեության, կրթական գործընթացների իրականացման ընթացակարգերի, կրթական ծրագրի բովանակության և այլնի վերաբերյալ:

Դրական է, որ հարցումների, հանդիպումների և անմիջական շփումների արդյունքում վեր են հանվում ուսանողների կարիքները և դրանց լուծումներ են տրվում, որը ուսանողական արդյունավետ միջավայրի գրավականներից է:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսանողների համար կազմակերպվում են խորհրդատվություններ և լրացուցիչ դասընթացներ՝ ապահովելու նրանց մասնագիտական առաջընթացը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում այն հարթակի ստեղծումը, որը հանարավորություն կտա բոլոր դասախոսների նյութերը հասանելի դարձնել ուսանողներին:

Չնայած շրջանավարտները հիմնականում ապահովված են աշխատանքով՝ Հիմնարկը քայլեր է կատարում շրջանավարտների կարիերային նպաստելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում կայուն կապերի ստեղծումը ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան կառույցների հետ, որոնք հնարավորություն կտան շրջանավարտներին աշխատանքի անցնել իրենց իսկ մասնագիտությամբ:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում, ինչը նպաստում է ուսանողների մասնագիտական առաջխաղացմանը և վերլուծական, հետազոտական մտքի զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ուսանողների հավաքագրման և ընտրության գործող մեխանիզմներն ապահովում են ուսանողների անհրաժեշտ քանակ, տարբեր եղանակներով վեր են հանվում ուսանողների կրթական կարիքները, առկա են ուսանողների կրթական կարիքներին արձագանքման օրինակներ, կազմակերպվում են լրացուցիչ դասընթացներ և ուսանողներին տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ, վարչական անձնակազմը մշտական կապի մեջ է ուսանողների հետ, ուսանողներն ակտիվորեն ներգրավված են հետազոտական գործունեության մեջ, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը բավարարում է 4-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: «Իմ քայլ» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

[5] Տեքստը փոփոխվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Հիմարկն ի սկզբանե իր առջև նպատակ է դրել ուսումնական գործընթացում ներգրավել արտերկրից հրավիրված բարձր որակավորում ունեցող դասախոսական կազմ:

Կրթական ծրագրի ղեկավարի կողմից կազմած գիտական խումբը, օգտագործելով առկա միջազգային գիտական կապերը, ընտրել է գիտնականներ Հայաստանից և արտերկրից, ովքեր առաջատար են գիտության և տեխնիկայի ընտրված ոլորտներում և ունեն դասավանդման զգալի փորձ: Կարևորվել են գիտնականների միջազգային ճանաչումը, ինչպես նաև գիտաչափական ցուցանիշները (Հիրշի գործակից, հոդվածների քանակ և այլն):

Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունման ժամանակ ամեն ուսումնական տարի նրանց հետ կնքվում են ծառայությունների մատուցման պայմանագրեր: Ներկայումս կրթական ծրագրում համատեղության կարգով դասավանդում են թվով յոթ դասախոս ՀՀ-ից և տասը դասախոս արտերկրից: Փորձագիտական խմբի կողմից դասախոսական կազմի մասնագիտական որակների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք ամբողջությամբ համապատասխանում են կրթական ծրագրի նպատակներին:

Դասախոսի հեռացումը Հիմարկից կանոնակարգված չէ: Փորձագիտական այցի ժամանակ կայացած հանդիպումներից պարզվեց, որ ուսանողների կողմից դասախոսից դժգոհելու դեպքում, եթե դասախոսը չի բավարարում ուսանողների պահանջները, ուսումնաօժանդակ կազմի հետ աշխատանքներում դրսևորում է անպատասխանատու վարքագիծ, ապա նրա հետ պայմանագրային հարաբերությունները դադարեցվում են: Ուսումնառության ընթացքում նման դեպք արձանագրվել է, և այդ դասախոսի հետ պայմանագիրը չի երկարաձգվել:

Ուսումնաօժանդակ կազմի ընտրությունը կատարվում է Հիմնարկի տնօրինության կողմից՝ հաշվի առնելով մասնագիտական, լեզվական, կազմակերպչական և այլ կարողություններ: Այդ կազմը փոքրաթիվ է. նրանում ներառված են ուսումնական գծով պատասխանատուն և լաբորանտը:

Կենտրոնի տնօրենի 2022թ. հրամանով սահմանված են ՊԴ կազմի ընտրության 3 չափանիշ. «Սկոպուս» համակարգում հեղինակի գնահատման Հիրշի ինդեքսի ցուցանիշ, առնվազն դոցենտի կոչում և ոլորտում առաջատար գիտնական լինելու հանգամանքը: Ներկայումս Հիմնարկում դասավանդող բոլոր դասախոսները համապատասխանում են նշված չափանիշներին:

Որպես ընտրված դասախոսական կազմի պարբերաբար գնահատման մեխանիզմ՝ Հիմնարկում կիրառում են ուսանողական հարցումները: 2023թ. տնօրենի կողմից հաստատված «Ուսանողական հարցման կարգի» համաձայն «իրականացվում են անանուն հարցումներ՝ պարզելու ուսանողների կարծիքը դասախոսների, դասավանդվող մասնագիտական առարկաների և դասավանդման որակի վերաբերյալ»: Յուրաքանչյուր կիսամյակ իրականացվող հարցումների արդյունքները վերլուծելուց հետո՝ գիտական խորհուրդն իրավասու է առաջարկել փոխարինել դասախոսին (եթե նրա դասավանդման մակարդակը չի համապատասխանում կազմակերպության չափանիշներին):

Գնահատումների արդյունքում վերհանված դասախոսական կազմի կարիքների հիման վրա վերապատրաստումներ կամ կատարելագործման միջոցառումներ Հիմնարկը չի իրականացնում. գերադասում են դասախոսին փոխարինել: Միևնույն ժամանակ դասավանդման մեթոդների կամ առարկայական ծրագրերի բարելավմանը ուղղված խորհրդատվություններ դասախոսներին տրվում են Գիտական խորհրդի կողմից:

Հիմնարկի ղեկավարությունը պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող գործիք է համարում բարձր աշխատավարձը, որը մի քանի անգամ ավել է ՀՀ բուհերում գործող դրույքաչափերից, ինչպես նաև ավիատոմսերի և կացության ծախսերի հոգալը: Փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ դասախոսների հավաստեցին, որ ունեն պայմանավորվածություններ ծրագրին երկարաժամկետ մասնակցության վերաբերյալ: Օտարերկրյա դասախոսները համաձայնեցնում են համալսարանի ղեկավարության հետ դասավանդման կարճաժամկետ այցելությունների ամսաթվերը և ժամանակահատվածը: Դասախոսների հանկարծակի մերժումների դեպքում առկա է տեղացի և արտասահմանցի դասախոսների կադրային ռեզերվ, ովքեր պատրաստ են փոխարինման: Կադրային ռեզերվը, ինչը Հիմնարկը դիտարկում է ծրագիրը դասախոսական կազմով ապահովման երաշխիք, Գիտական խորհրդի անդամների անձնական և գիտական կապերի արդյունք է: Այդ բազան ինստիտուցիոնալացման և կանոնակարգման կարիք ունի:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր անհրաժեշտություն Հիմնարկը չի տեսնում, քանի որ կրթական ծրագրի առանձնահատկությունից ելնելով՝ դասավանդման համար հրավիրվում են ոլորտում անվանի և որակյալ կադրեր: Միջազգային և տեղացի դասախոսների ներգրավումը և նրանց միջև հաղորդակցությունը Հիմնարկի կողմից դիտարկվում է որպես փորձի փոխանակման հնարավորություն: Սակայն փորձագիտական այցի հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսների միջև դեմ առ դեմ կամ առցանց հանդիպումները հաճախակի չեն, նրանք տեղեկացված չեն մյուսների ծրագրերից, դասավանդման և գնահատման մոտեցումներից:

Չնայած վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի փոքր թվաքանակին՝ ուսանողներն ու դասախոսները գոհ են կրթական ծրագրի իրականացման ընթացքից: Վարչական և ուսումնական գործընթացների կազմակերպման ընթացիկ խնդիրները օպերատիվ կերպով լուծվում են. հաստատության փոքր լինելու պատճառով հաղորդակցությունը ավելի շատ հիմնված է անձնական շփումների վրա, իսկ ուսանողների և դասախոսների կապը ուղղակի է կամ ուսումնական գործընթացի պատասխանատուի միջոցով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկի տնօրենի, կրթական ծրագրի ղեկավարի և գիտական խորհրդի անդամների համատեղ աշխատանքի արդյունքում իրականություն է դարձել ուսումնական գործընթացում տեղացի և արտերկրից հրավիրված բացառապես բարձր որակավորում ունեցող դասախոսական կազմ ներգրավելու նպատակը: Կրթական ծրագրերում ներգրավված դասախոսները համապատասխան ուղղությունների բարձրակարգ մասնագետներ են, ինչը բարձրորակ կրթության տրամադրման և հետազոտական աշխատանքների իրականացման գրավական է: Կրթական ծրագիրն ամբողջությամբ հաստատում է իր բացառիկությունը՝ շնորհիվ ոչ միայն բովանդակության տեսակետից յուրահատուկ դասընթացների առկայության, այլև դասախոսական կազմի բարձր մասնագիտական մակարդակի:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դասախոսների ընտրության ժամանակ կարևորվում է ինչպես նրանց մասնագիտական կարողությունները, այնպես էլ դասավանդման փորձը, որը հնարավորություն է տալիս հասնելու ծրագրի հիմնական նպատակներին և սահմանված կրթական վերջնարդյունքներին: Փորձագիտական խումբը փաստում է, որ դասախոսական կազմի մասնագիտական որակները համապատասխանում են կրթական ծրագրի նպատակներին:

Դասախոսական կազմի հեռացման հաստատված ընթացակարգի բացակայության պայմաններում դրական է, որ կազմակերպվում են դասավանդման որակին առնչվող ուսանողական հարցումներ և հանդիպումներ: Փաստացի դրանք հանարավորություն են տալիս ընթացիկ խնդիրներին արագ արձագանքելու և, անհրաժեշտության դեպքում, փոփոխություններ կատարելու դասավանդող կազմում: Բայց փորձագիտական խումբը գտնում է, որ կարիք կա ներդնելու դասախոսական կազմի պարբերաբար գնահատման բազմաբաղադրիչ համակարգ, ինչը թույլ կտա ավելի օբյեկտիվ և անկողմնակալ գնահատել դասախոսի աշխատանքը:

Փորձագիտական խումբը այցի ժամանակ տեղի ունեցած հանդիպումների արդյունքում գտնում է, որ դասախոսական կազմի կայունության ապահովման կիրառվող մեխանիզմները ծառայում են իրենց նպատակին, և այդ ուղղությամբ մոտակա տարիներին էական խնդիրներ չեն առաջանա: Դրական է, որ սահմանվել է մրցունակ աշխատավարձ դասախոսական կազմի համար, որը հնարավորություն է տալիս ոլորտի փորձառու մասնագետներ ներգրավել դասավանդման գործընթացում: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում ծրագրի շրջանավարտների ներգրավվումը դասավանդման գործընթացում, որպես դասախոսների օգնականներ, որը կնպաստի դասախոսական կազմի կայունությանը և դասապրոցեսի ավելի արդյունավետ ժամանակացույց կազմելուն: Բացի այդ, արտասահմանցի դասախոսների բացակայության ժամանակ, նրանց օգնականները կլուծեն գործնական դասերի անցկացման, ուսանողներին՝ նյութը յուրացնելուն աջակցելու և խորհրդատվություններ տրամադրելու խնդիրը:

Բացի այդ փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը պետք է դասախոսների աշխատավարձի վրա ծախսվող միջոցների արդյունավետության բարձրացման ուղղությամբ քայլեր ձեռք առնի: Որակյալ կադրերի կարճատև այցերի ընթացքում նրանց գիտական և մանկավարժական պոտենցիալն ամբողջությամբ չի օգտագործվում, ուստի մեխանիզմներ է պետք ներդնել այլ ճանապարհով նրանց հմտություններն օգտագործելու համար: Նրանք կարող են ակտիվ մասնակցություն ունենալ կադրային բազան երիտասարդ մասնագետներով լրացնելու, դասախոսների օգնականներ պարտրաստելու, հոդվածներ գրելու, պրակտիկաներ ղեկավարելու և այլ գործընթացներում:

Թեև առկա չեն մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմներ, որը մասամբ պայմանավորված է ծրագրի յուրահատկությունով, մասամբ էլ հրավիրված դասախոսական կազմի որակավորումների մակարդակով, փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բազմազանեցվեն տեղացի և միջազգային դասախոսների միջև հաղորդակցության ձևերը և հնարավորությունները, ինչը կնպաստի մասնագիտական ոլորտում նորամուծությունների ներդրմանը և լավ փորձի տարածմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ դասախոսական կազմի ներգրավման մոտեցումների կիրառման արդյունքում Հիմնարկի և կրթական ծրագրի ղեկավարներին հաջողվել է ներգրավվել ոլորտի տեղացի և օտարազգի լավագույն մասնագետներ, առկա են

դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ, ներդրված ՊԴ կազմի գնահատման մեխանիզմները գործում են, դասախոսական կազմի կայունության ապահովման կիրառվող մեխանիզմները ծառայում են իրենց նպատակին, և մոտակա տարիների համար ձևավորվել է անհրաժեշտ կադրային ռեզերվ, փոքրաթիվ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմով լուծվում են ուսումնական գործընթացների կազմակերպման ընթացիկ խնդիրները, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: «Իմ քայլ» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Գիտությանը առնչվող նպատակներ իր ռազմավարության մեջ ունի «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամը. մասնավորապես նշված է՝ «աջակցել ՀՀ-ում գիտական համայնքի զարգացմանը օգտագործելով միջազգային լավագույն փորձն ու օրինակները՝ առանցքային նշանակության տալով ԲՏՃՄ ուղղություններին, ապահովել վերջինիս կապը տնտեսության տարբեր ճյուղերի հետ»: Հիմնարկը չունի ռազմավարության իրականացման համար մշակված քաղաքականություն: Դասախոսական կազմը տարբեր հաստատությունների և ուղղությունների հրավիրված հետազատող-մասնագետներ են, որոնք առաջնորդվում են սեփական հաստատությունների կամ անձնական հետաքրքրություններով: Հիմնարկի և կրթական ծրագրի հետազոտահենք լինելն արտահայտվում է գիտական ոլորտում հայտի մասնագետների ներգրավվածությամբ կրթական գործընթացում:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ իրականացվում են մի շարք աշխատանքներ գիտահետազոտական ոլորտի զարգացման համար, մասնավորապես, մագիստրոսներն ընդգրկվում են դասախոսների թեմատիկ հետազոտություններում, որոնք դասախոս-ուսանող համատեղ հոդվածների հիմք եմ դառնում: Բացի այդ, դասախոսների կողմից տրվում են հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղված առաջադրանքներ. գիտական հոդվածների ուսումնասիրություններ և դրանց հիման վրա եզրահանգումների կազմում: Հետազոտությունների իրականացման միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր Հիմարկը դեռևս չի մշակում:

Դասախոսները և կրթական ծրագրի ղեկավարը փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ նշեցին, որ նրանք ունեն համատեղ գիտական հետազոտություններ իրականացնելու փորձ: Ավելին, այս պահին էլ կան խնդիրներ, որոնք նրանք համատեղ են փորձում լուծել, սակայն դա չի կապվում Հիմարկի գործունեության հետ: Նշվեց նաև, որ դասընթացների ուսումնասիրման համար ուսանողներին ներկայացվող գրականության ցանկում ընդգրկվում են դասախոսների սեփական հետազոտական աշխատանքները որպես ուսումնասիրվող նյութ՝ շեշտադրելով հետազոտությունների վերջին արդյունքները:

Հետազոտական գործունեությունը հիմնականում արտահայտվում է ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաներին առնչվող խնդիրների լուծումով: Այդ գործունեությունը իրականացվում է ծրագրում ներառված դասախոսների ղեկավարությամբ մագիստրոսական ծրագրի մասնագիտական ուղղություններով: Փորձագիտական խմբի կողմից թեզերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում հետազոտությունները կրում են ինչպես հիմնարար, այնպես էլ փորձարարական բնույթ:

Լաբորատոր հետազոտությունների իրականացման համար ձեռք է բերվել համաձայնություն Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի, Երևանի պետական համալսարանի և ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտների հետ և ուսանողները տեղացի դասախոսների հետ միասին իրականացնում են հաշվարկներ, որոնք որոշակիորեն օգտագործվում են թեզերում: Նախատեսվում է, որ մագիստրոսական թեզերը պետք է տպագրվեն հեղինակավոր միջազգային ամսագրերում որպես գիտական հոդվածներ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ առաջին շրջանավարտներից մի քանիսը տպագրության են հանձնել հոդվածներ ինչպես միջազգային, այնպես էլ տեղական ամսագրերում:

Հիմնարկը նաև պլանավորում է օգտագործել ռուսաստանյան «Սկոլկովո» քվանտային կենտրոնի լաբորատոր հզորությունները, որոնք ապագայում տեղակայվելու են ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տարածքում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի ռազմավարական ծրագիրը կարևորում և շեշտադրում է ԲՏՃՄ ուղղություններով հետազոտական պոտենցիալի բացահայտումն ու դրա զարգացումը միջազգային համագործակցությունների միջոցով: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է հետազոտական ոլորտում Հիմնարկի ռազմավարության և որևէ ծրագրի բացակայությունը, որտեղ արտացոլված կլինեին հետազոտական հետաքրքրությունները և հավակնությունները, հստակ նկարագրված կլինեին նպատակները, խնդիրները և ոլորտի համապարփակ զարգացմանը նպաստող գործողությունները: Հետազոտության և գիտական գործունեության զարգացմանը կնպաստեր նաև հստակ ու չափելի ցուցիչների սահմանումը և դրանց հիման վրա պլանավորման իրականացումը:

Դրական է, որ Հիմնարկը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, որն իրականացնելու համար պատրաստ է ֆինանսավորել ուսանողների մասնակցությունը տարբեր միջազգային կոնֆերանսներին: Փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ դասախոսները և կրթական ծրագրի ղեկավարը նշեցին համատեղ գիտական հետազոտություններ իրականացնելու փորձի մասին: Փորձագիտական խումբը գտնում է, որ առկա դասախոս-գիտնականների ռեսուրսների ուժերի կենտրոնացմամբ և ընդհանուր հետաքրքրությունների շրջանակում հնարավոր է ձևավորել տեղացի և արտասահմանցի գիտնականներից կազմված հետազոտական խմբեր՝ իրականացնելու աշխատանքներ Հիմնարկի՝ գիտության ոլորտի ռազմավարական նպատակների ուղղությամբ՝ ակտիվորեն ներգրավելով մագիստրոսներին:

Դրական է, որ կրթական ծրագիրը կազմված է հետազոտական մեծ բաղադրիչ ներառելով, որն արտահայտվում է առաջադրանքներով, համատեղ հոդվածների պատրաստումով, որոնք նպաստում են ուսանողների մոտ հետազոտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև գիտությամբ զբաղվելուն: Փորձագիտական խումբը դրական է համարում թեզերի արդյունքները որպես հոդվածներ տպագրելու Հիմնարկի պահանջը, որը

կանոր է գիտահետազոտության զարգացման, Հիմնարկի հեղինակության և գիտական արդյունքների տարածման տեսակետից:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Հիմնարկում ապահովվում է կապը գիտական հետազոտությունների և ուսումնառության կապը: Պարտադիր գրականության ցանկում ընդգրկվող դասախոսների սեփական հետազոտական աշխատանքները որպես ուսումնասիրվող նյութ ներառելով դասախոսական կազմը կարողանում է տեղեկություն տրամադրել ոլորտում հետազոտությունների վերջին արդյունքների վերաբերյալ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ իրականացվող աշխատանքների արդյունքում շրջանավարտների մոտ ամբողջապես ձևավորվում են մասնագիտական հետազոտական հմտություններ, և նրանք պատրաստ են ինքնուրույն մասնակցելու հետազոտությունների և նոր գիտելիք ձևավորելու գործընթացին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ առկա է հետազոտական գործունեության նպատակադրում, կրթական ծրագրում ներգրավված դասախոսները և ուսանողները իրականացնում են համատեղ հետազոտական աշխատանքներ, կրթական ծրագիրը պարունակում է հետազոտական բաղադրիչ և ուսանողներին տրվող առաջադրանքները նպաստում են գիտության նկատմամբ նրանց հետաքրքրության բարձրացմանը և հետազոտական հմտությունների զարգացմանը, դասախոսներն իրենց հետազոտությունների արդյունքները կիրառում են դասապրոցեսում, որպես պահանջ է դրված մագիստրոսական թեզերի արդյունքները միջազգային և տեղական գիտական ամսագրերում որպես հոդվածի տպագրումը, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը բավարարում է 6-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: «Իմ քայլ» բարեգործական հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկն ուսումնական միջավայրի բարելավումն անընդհատ իրականացվող գործընթաց է դիտարկում՝ կրթական ծրագրի պահանջներին և ժամանակակից գիտության զարգացումներին համապատասխանեցնելու նպատակով: Ներկայումս Հիմնարկը սեփական ուսումնական տարածք չունի, և կրթական ծրագիրն իրականացնելու համար ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մասնաշենքում վարձակալում է 1 լսարան և 1 սենյակ որպես ամբիոն:

Լսարանը կահավորված է պրոյեկտորով և համապատասխան տեխնիկայով, ինչպես նաև ժամանակակից գրատախտակով, առկա է անվճար Wi-Fi կապ, որն օգտագործվում է դասապրոցեսի կազմակերպման համար:

Վարձակալած գրադարանը և լաբորատորիան գտնվում են ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի մասնաշենքում: Գրադարանում էլեկտրոնային տարբերակով առկա են ուսումնական պլանին համապատասխան դասընթացների համար նախատեսված հիմնական դասագրքերը:

Ուսումնական, պրակտիկայի և հետազոտությունների իրականացման համար պայմանագրային կարգով օգտագործվում են ԵՊՀ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի և ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի գիտական լաբորատորիաները:

Ինչպես Հիմնարկի կողմից իրականացված հարցումների արդյունքներն են ցույց տալիս, այնպես էլ փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ հաստատվեց, որ ուսանողները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը բավարարված են լսարանից և դրա տեխնիկայի հագեցվածությունից:

Հիմնարկը չի վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ, քանի որ ոչ վաղուց է լիցենզավորվել ԿԳՄՄՆ համապատասխան կառույցի կողմից:

Հիմնարկը պլանավորում է տարեկան ֆինանսները և քննարկում նախահաշիվը Հիմնադրամի գործադիր տնօրենի հետ: Հիմնարկը չունի պետական բյուջեից ֆինանսավորում և ամբողջությամբ ֆինանսավորվում է «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի կողմից: Փորձագիտական խմբի հետ հանդիպման ժամանակ Հիմնադրամի փոխտնօրենը հավաստիացրեց, որ «Իմ քայլ» հիմնադրամը պլանավորում է շարունակել ծրագրի իրականացման ֆինանսավորումը ևս 6-7 տարի:

Հիմնադրամի կողմից տրամադրվող ֆինանսական ռեսուրսները ծախսվում են ըստ կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների առաքելության հիմնական ուղղություններից երկուսի՝ դասավանդում և ուսումնառություն և ծառայություն հասարակությանը: Ժամանակակից սարքերով համալրված ուսումնագիտական լաբորատորիաների ձևավորման, գիտական հետազոտությունների համար ֆինանսներ չեն հատկացվում:

Հիմնարկը վտանգ է տեսնում մեկ աղբյուրից ֆինանսավորման տեսակետից և պլանավորում է աղբյուրների դիվերսիֆիկացիա:

Հիմնարկի տնօրենը, ելնելով ընթացիկ անհրաժեշտությունից, համապատասխան զեկուցագրով յուրաքանչյուր ամիս դիմում է Հիմնադրամի գործադիր տնօրենին՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ստանալու և ներկայացված հոդվածներով ծախսելու համար:

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամն է իր ներդրումներով ամբողջությամբ ապահովում Հիմնարկի ֆինանսական կայուն վիճակը: Հիմնարկի ներկայացրած բյուջեն հաստատում է Հիմնադրամի տնօրենը և այնուհետև ներկայացվում է Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

Հիմնարկի ծախսային հոդվածները հետևյալն են՝

- աշխատավարձի վարձատրությունները (վարչական և դասախոսական կազմեր),
- հրավիրված դասախոսական կազմի՝ ավիատոմսի և կեցության ծախսերը,
- լսարանի վերանորոգման ծախսերը,
- գրենական պիտույքների և տեխնիկայի ձեռքբերման ծախսերը,
- գործուղման ծախսերը:

Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմներից են Հիմնարկի տնօրենի պարբերական հաշվետվությունները Հիմնադրամի տնօրենին, որոնք հիմնականում նվիրված են լինում փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը:

««Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ռազմավարություն»-ում նախատեսված միջոցառումների իրականացման տեսակետից Հիմնարկը խնդիրներ չի տեսնում, համարելով, որ տրամադրվող ռեսուրսները բավարար են: Ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմները, գործընթացները և ընթացակարգերը պարզ են. ամեն ամսվա սկզբին Հիմնարկի տնօրենի զեկուցագրով տրամադրվում են անհրաժեշտ ֆինանսները պահանջվող ռեսուրսները ձեռք բերելու համար:

Հիմնարկը թույլ կողմ է համարում այն, որ՝ «սկզբնական փուլում գտնվելու հանգամանքը դեռևս թույլ չի տալիս ունենալ ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիա»:

Որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ռեսուրսային բազայի արդյունավետությունը չի վերլուծել, ինչը կապված է այն փաստի հետ, որ ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասավանդողների և ուսումնառողների կարիքները չեն ուսումնասիրվում:

Հիմնարկը դեռևս չունի մշակված կանոնակարգեր տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման համար: Հիմնարկին առնչվող բոլոր փաստաթղթերը՝ զեկուցագրեր, բյուջե, պայմանագրեր, հրամաններ, կարգեր, ուսումնառության պայմանագրեր և այլն հասանելի են տեղեկատվական ներքին համակարգի միջոցով:

Ուսումնական գործընթացի կազմակերպմանն առնչվող մի շարք փաստաթղթեր հասանելի են դարձել «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի պաշտոնական կայքէջում՝ Հիմնարկի հավատարմագրման գործընթացին դիմելուց հետ:

Հիմնարկը ուսումնական և օժանդակ տարածքներ վարձակալում է ԵՊՀ-ում, որն ապահովված է անհրաժեշտ անվտանգության պայմաններով: ԵՊՀ-ում առկա է անվտանգության համակարգ, այդ թվում՝ պահակային ծառայություն, հակահրդեհային ազդանշանային համակարգ, մասնաշենքի տեսահսկում: Առկա են պայմաններ ուսանողներին արտակարգ իրավիճակներում արագ և անվնաս տարհանելու համար:

Հիմնարկը գտնում է, որ ստեղծված իրավիճակում լրացուցիչ նման ծառայությունների կարիք չկա, ուստի առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններին ֆինանսական միջոցներ չեն հատկացվում:

Հիմնարկը ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներից է համարում դասընթացի գնահատման հարցումը:

Ինքնավերլուծության մեջ և փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ նշվեց, որ ռեսուրսների վերաբերյալ դասավանդողը իր կարծիքն արտահայտում է ոչ ֆորմալ տարբերակով, որն էլ իր հերթին ներկայացվում է Հիմնարկի տնօրենին: Սակայն այդ կարծիքները չեն փաստաթղթավորվում, թեև նշվում է, որ «դրանց հիման վրա է ըստ անհրաժեշտության և կարիքի իրականացվում բարելավում»:

Ոչ ինքնավերլուծության մեջ, ոչ էլ այցի ժամանակ ռեսուրսների կիրառելիությյան, հասանելիության և արդյունավետության գնահատման արդյունքների մասին տեղեկատվություն փորձագիտական խմբին չի տրամադրվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ “Quanta” կրթական ծրագրի իրականացման և հիմնական ռազմավարական նպատակներին հասնելու համար «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը

ապահովված է անհրաժեշտ բազային ռեսուրսներով, ինչը բավարար է ուսումնական միջավայր ձևավորելու համար: Սակայն հաշվի առնելով աշխարհում քվանտային ֆիզիկայի ոլորտի զարգացման տեմպերը՝ ռեսուրսների անընդհատ թարմացման և ավելացման կարիք կա: Դա առանձնապես վերաբերում է նորագույն տեխնոլոգիաներին և լաբորատոր բազային, ինչը կնպաստի ուսանողների գործնական կարողությունների ձեռքբերմանը: Լաբորատորիաների խնդիրը տեսնում է նաև Հիմնարկը, որի լուծման տարբերակներից կարող է լինել եղած համագործակցությունների ընդլայնումը և նոր համագործակցությունների հաստատումը տեղական և միջազգային գործընկերների հետ՝ նրանց լաբորատոր բազաների օգտագործման նպատակով:

Լաբորատորիաների հետ միասին՝ վարձակալված գրադարանը ուսումնական միջավայրի կարևոր մասն է կազմում: Այնտեղ էլեկտրոնային տարբերակով առկա գրքերը, դասախոսական կազմի կողմից ստացվող այլ ուսումնական նյութերի հետ միասին, բավարարում են ուսանողների պահանջները ուսումնական պլանով նախատեսված հիմնական դասընթացների ուսումնասիրման տեսակետից:

Դրական է, որ «Իմ քայլը» հիմնադրամը պլանավորում է շարունակել ծրագրի իրականացման ֆինանսավորումը ևս 6-7 տարի, ինչի մասին փորձագիտական խմբի հետ հանդիպման ժամանակ հավաստիացրեց Հիմնադրամի փոխտնօրենը: Այդ փաստը որոշակի կայունության հավաստիք է, սակայն փորձագիտական խումբը վտանգ է համարում մեկ աղբյուրից ֆինանսավորման փաստը և աղբյուրների դիվերսիֆիկացիայի կարիք է տեսնում:

Դրական է, որ խնդիրը գիտակցում է նաև Հիմնարկը, բայց նաև հստակ քայլեր պետք է ձեռնարկվեն կառավարությունից կամ ԲՏԱ նախարարությունից ֆինանսավորում ստանալու համար, ինչը ավելի երկարաժամկետ կայունության երաշխիք կստեղծի: Այդ դեպքում հնարավորություն կստեղծվի ժամանակակից սարքերով համալրված ուսումնագիտական լաբորատորիաների ձևավորմանը, գիտական հետազոտություններին, առողջության պահպանմանն ուղղված ծառայություններին նույնպես ֆինանսական միջոցներ հատկացնել:

Հիմնարկը դեռևս չունի մշակված կանոնակարգեր տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման համար, ինչը փոքր ծավալի կառույցի համար խնդիրներ չի առաջացնում: Դրական է, որ իրականացվում է թղթային և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, կիրառվում են էլեկտրոնային գործիքներ տեղեկատվության կառավարման համար, որը նպաստում է Հիմնարկի գործունեության թափանցիկությանը:
Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Հիմնարկի զբաղեցրած ուսումնական և օժանդակ տարածքներն ապահովված են անվտանգության համակարգով, այդ թվում՝ պահակային ծառայություն, հակահրդեհային ազդանշանային համակարգ, մասնաշենքի տեսահսկում: Հիմնարկը պետք է ֆինանսական միջոցներ գտնի աշխատակիցների և ուսանողների առողջության պահպանմանն ուղղված ծառայություններ կազմակերպելու համար նույնպես:

Բացի նոր ռեսուրսների ձեռքբերումով անհանգստանալուց՝ կարևոր է ուսումնասիրել, թե առկա ռեսուրսներն ինչ չափով են կիրառելի, հասանելի և արդյունավետ օգտագործում, ինչը որակի ապահովման համակարգի խնդիր է: Դեռևս չի ուսումնասիրվում, թե ուսուցման գործընթացների որակի ապահովման համար ինչպիսի կարիքներ ունեն դասավանդողները և ուսումնառողները, որպեսզի տրամադրվեն համապատասխան ռեսուրսներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկը կրթական ծրագրի իրականացման և հիմնական

ռազմավարական նպատակներին հասնելու համար ապահովված է անհրաժեշտ բազային ռեսուրսներով, ինչը բավարար է ուսումնական միջավայր ձևավորելու համար, «Իմ քայլը» հիմնադրամի ֆինանսավորումը կայունության երաշխիք է ծրագրի իրականացման մոտակա 6-7 տարվա համար, կիրառում է թղթային և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, էլեկտրոնային գործիքներ տեղեկատվության կառավարման համար, ինչը նպաստում է Հիմնարկի գործունեության թափանցիկությանը, ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր ուսանողների և դասախոսների համար, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը բավարարում է 7-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Իմ քայլը» հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Հիմնարկի հաշվետվողականությունը բաժանվում է երկու մասի՝ ներքին և արտաքին: Արտաքին է համարվում հաշվետվողականությունը Հիմնարկին ֆինանսական աջակցություն տրամադրող կազմակերպություններին և լիազոր մարմնին տարեկան հաշվետվությունների ներկայացումը: Հիմնարկի ծրագիրը ֆինանսավորող յուրաքանչյուր կազմակերպության տրամադրվում է հաշվետվություն, ըստ վերջինիս ներկայացրած ձևաչափի:

Ներքին հաշվետվողականության գործընթաց է համարվում Հիմնարկի հաշվետվությունը Հիմնադրամի գործադիր տնօրենին: Հաշվետվություն կազմում է նաև ուսումնական գծով պատասխանատուն: Հաշվետվությունների ուսումնասիրությունից փորձագիտական խմբին պարզ դարձավ, որ դրանք պարունակում են ուսումնական գործընթացների և ֆինանսական ծախսերի վերաբերյալ փաստական, այլ ոչ վերլուծական տվյալներ:

Հիմնարկի գործունեության մասին տարեկան հաշվետվությունները ընդգրկվում են «ԻՄ քայլը» հիմնադրամի հաշվետվության մեջ և հասանելի են հանրությանը Հիմնադրամի կայքի միջոցով:

«Իմ քայլը» հիմնադրամի կայքէջում բաժին է հատկացված մագիստրոսական ծրագրին: Վերջերս կայքում բացվել է նոր էջ՝ հավատարմագրման հետ կապված, որտեղ ներկայացված են հիմնարկի գործունեությունը կարգավորող փաստաթղթերը: Հիմնադրամը ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ նույնպես հասանելի են տեղեկատվություն կրթական ծրագրի վերաբերյալ: Ծրագիրը ներկայացնելու համար կազմակերպվում են PR արշավներ: Իրականացվում են հարցազրույցներ ուսանողների և դասախոսների հետ, ծրագրի արդյունավետության և առավելությունների մասին, որոնք հրապարակված են Հիմադրամի կայքում:

Հասարակության հետ հետադարձ կապը կազմակերպվում է ինչպես էլեկտրոնային հասցեին, այնպես էլ կայքին կամ սոցիալական ցանցի էջերին նամակներ ուղարկելով: Ներքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմներ են համարվում հարցումներն ու հանդիպումները: Որպես հետադարձ կապի գործիք է կիրառվում նաև հեռախոսակապը:

Հիմնադրամի կողմից իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ ամառային դպրոց, օլիմպիադա, գիտաժողով[6]: Դրանք մագիստրոսական ծրագրին ուսանողներ ներգրավելու նպատակ ունեն: Մագիստրոսական ծրագրի դասընթացներին մասնակցել ցանկացողներին ազատ ունկնդրելու հնարավորություն է տրվում, որի ձևաչափը կրթական ծառայությունների լրացուցիչ տարատեսակ է:

Դասախոսական անձնակազմի ներկայացուցիչներն իրականացնում են նաև խորհրդատվական ծառայություններ ամառային դպրոցի մասնակիցների համար: Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման այլ մեխանիզմներ առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևոր է համարում Հիմնարկի կողմից իրականացվող գործընթացները, որոնք միտված են պետության զարգացմանը: «Quanta» - «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» մագիստրոսական կրթական ծրագրի մշակումը համաձայնեցվել է պետական կառույցների հետ և ուղղված է Հայաստանում նորագույն տեխնոլոգիաների ներդրման հետ կապված խնդիրների լուծմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում գործունեության հետ կապված հաշվետվությունների պարբերական տրամադրումը, միևնույն ժամանակ կարևոր է համարում հաշվետվությունների որակի բարելավումը, հիմնված վերլուծական տվյալների վրա, ինչը նաև կհիմնավորի ռազմավարական նպատակների իրագործման արդյունքները:

Փորձագիտական խումբը դրական է համարում հասարակության հետ կապերին ուղղված աշխատանքների իրականացումը, PR արշավները և այլն: Միևնույն ժամանակ կարևոր է, որ ծրագրի մրցակցային առավելություններն առավել համապարփակ ներկայացվեն հանրությանը, որը կնպաստի ծրագրի նկատմամբ վստահության բարձրացմանը և դիմորդների ներգրավմանը:

Դրական է, որ Հիմնարկի և ծրագրի մասին տեղեկատվությունը հասանելի է «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի կայքէջում առանձնացված հատվածում, միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ Հիմնարկը առավել համապարփակ կերպով ներկայացված լինի կայքում՝ նպաստելով Հիմնարկի մասին տեղեկատվության տարածմանը:

Փորձագիատական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հասարակության լայն շերտերին գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմները նույնպես ընդլայնման կարիք ունեն, այն տեսակետից, որ ծրագիրը յուրահատուկ է և դրանում ներգրավված դասախոսները և շրջանավարտներն ունեն որոշակի փորձառություն, որը օգտակար կլինի հասարակության համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Հիմնարկում գործում է հաշվետվողականության համակարգ՝ ներքին և արտաքին բաղադրիչներով, Հիմնարկը որոշակիորեն ապահովում է իր ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, իրականացվում են հասարակության հետ կապերին ուղղված նպատակային աշխատանքներ, PR արշավներ և այլն, ներդրված են հասարակության լայն շերտերին գիտելիքների և արժեքների փոխանցման գործընթացներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Իմ քայլը» հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի

[6] Տեքստը փոփոխվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Հիմնարկն արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր դեռևս չունի, սակայն ունի համագործակցությունների լայն շրջանակ:

Հիմնարկը համագործակցում է հանրապետության գիտական և կրթական կառույցների հետ, օգտագործվում է այդ կառույցների լաբորատոր պոտենցիալը: Համագործակցության համաձայնագրեր են կնքվել նաև ԵՊՀ, Հայ-ռուսական համալսարանի, ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտի հետ, որոնց շրջանակներում ուսանողներին հնավորություն է տրվում լաբորատոր աշխատանքներ իրականացնել նշված հաստատությունների տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Համագործակցության պայմանագիր է կնքվել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ, որի շրջանակներում Հիմնարկին տրամադրվել է 50 միլիոն դրամ՝ դասախոսներ ներգրավելու նպատակով: Հիմնարկը շրջանավարտներին աշխատանքի տեղակավորման և պրակտիկաների իրականացման նպատակով համագործակցում է նաև Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ:

Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածք կամ կոնկրետ պատասխանատու Հիմնարկը չունի: Այդ ոլորտում որոշակի գործառույթներ իրականացնում են տնօրենը, ուսումնական գծով պատասխանատուն և լաբորանտը: Կրթական ծրագրում ներգրավված դասախոսները դասավանդման և հետազոտությունների իրենց միջազգային փորձն են ներդնում ուսումնական գործընթացում:

Կարևորվում է օտար լեզուների իմացությունը, քանի որ արտասահմանցի դասախոսների մի մասը դասավանդում է օտար լեզվով: Ծրագրին վերաբերվող մասնագիտական գրականությունը հիմնականում անգլերեն է, և ուսումնական ծրագրում ներառված է մասնագիտական անգլերենի դասընթաց: Միջազգային դասախոսների հետ կապը պահպանվում է անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

Փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ շրջանավարտները և ուսանողները նշեցին, որ իրենք տարբեր մակարդակներով են տիրապետում օտար լեզուների և որոշակի դժվարություններ են ունեցել ուսումնառության ընթացքում: Երկու կիսամյակ մասնագիտական օտար լեզվի ուսումնառությունը և ուսանողների կողմից ձևավորված խմբերում ներքին քննարկումները լուծում են լեզվի հետ կապված ընթացիկ խնդիրները:

Դատողություններ: Հիմնարկը կարևորում է միջազգային համագործակցությունը և արտաքին կապերի զարգացումը: Կրթական և հետազոտական բաղադրիչների միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման գործընթացներին է նպաստում միջազգային բարձր վարկանիշով դասախոսական անձնակազմի ներգրավումը: Արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականության և ընթացակարգերի մշակումը, դրա հետ կապված ռազմավարական զարգացման խնդիրներից բխող գործողությունների ժամանակացույցի ու պատասխանատուների սահմանումը ավելի հստակ

կկանոնակարգեր այս ուղղությամբ աշխատանքները: Դա նաև կնպաստեր եվրոպական չափանիշներին բավարարող նոր դասընթացների և ՄԿԾ-ների մշակմանը:

Կարևոր քայլ կլիներ նաև փոխանակման և շարժունության ծրագրերի մշակումը և օտարերկրյա ուսանողներին կրթական ծրագրում ներգրավվելու հնարավորությունների ստեղծումը՝ կիրառելով նաև միջազգային դասախոսների կապերը: Փորձագիտական խումբը գտնում է, որ նույնիսկ այն համալսարանների հետ կապերի հաստատումը, որտեղից հրավիրվում են արտասահմանցի դասախոսները, էապես կբարելավի Հիմնարկի ցուցանիշները միջազգայնացման ոլորտում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Հիմնարկը քայլեր է ձեռնարկել արտաքին համագործակցությունների ստեղծման համար, որոնք հնարավորություններ են ստեղծել ուսանողների պրակտիկայի կազմակերպման և դասախոսների ներգրավման համար: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ միջազգային գիտակրթական ինստիտուտների հետ համագործակցությունների ընդլայնումը կխթանի ուսանողների շարժունությունը ուսումնառության և պրակտիկայի կազմակերպման տեսակետից, ինչը փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ կարևորում էին դասախոսները և ուսանողները: Այս առումով փորձագիտական խումբը Հիմնարկում մեծ պոտենցիալ է տեսնում և կարևոր է համարում միջազգային դասախոսների կապերի կիրառումը:

ՀՀ ուսումնական և գիտահետազոտական կազմակերպությունների հետ կապերի ակտիվացումը, լաբորատոր հենքի ընդլայնումը, գործատուների հետ կապերի ակտիվացումը կարևոր քայլեր կլինեին ռազմավարական նպատակներին հասնելու ուղղությամբ: Դրական է, որ Հիմնարկը մեծ ուշադրություն է դարձվում օտար լեզվի (անգլերեն և ռուսերեն) իմացության մակարդակի բարձրացման վրա: Դա օտար լեզվով մատուցվող դասընթացների խորը տիրապետման, ուսանողների և դասախոսների շարժունության կայացման և օտարերկրյա ուսանողների ներգրավման կարևոր գործոն է:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը նպատակաուղղված աշխատանքներ է տանում փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու համար, առկա է դրան նպաստող դասախոսական անձնակազմ և ժամանակակից կրթական ծրագիր, ուսանողների համար ապահովում է օտար լեզվի անհրաժեշտ մակարդակ դասապրոցեսի կազմակերպման և միջազգային շարժունության համար, փորձագիտական խումբը գտնում է, որ հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունները հիմնականում համապատասխանում են չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: 2023թ. մշակվել է ««Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի քաղաքականությունը կրթության որակի

բնագավառում» փաստաթուղթը, ինչը հաստատված չէ կառավարման որևէ մարմնի կողմից: Քաղաքականության մեջ կրթության որակի բնագավառում Հիմնարկն իր առջև նպատակ է դրել «ապահովել բարձր մրցունակություն կրթական ոլորտում, պատրաստել բարձրորակ մասնագետներ, տարեցտարի կատարելագործել Հիմնարկի ուսումնական և կառավարման գործընթացների որակը և արդյունավետությունը»:

ՈԱ քաղաքականությունը, ուսուցման կազմակերպման և ռեսուրսներով ապահովման մի շարք խնդիրների լուծումից բացի, նախատեսում է որոշակի գործողությունների իրականացում.

- մշակել և ներդնել որակի կառավարման արդյունավետ համակարգ, որը կապահովի կրթական գործունեության սիստեմատիկ բարելավումը,
- ստեղծել հիմնարկի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գնահատման համակարգ,
- վերհանել ուսանողների կրթական կարիքները՝ որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և արդյունավետ կրթական միջավայր ապահովելու նպատակով և այլն:

ՈԱ ընթացակարգեր Հիմնարկը չունի մշակված, բացի «Ուսանողական հարցման կարգից»: Այդ կարգով իրականացվող հարցումների նպատակն է՝ «բացահայտել ուսանողների վերաբերմունքը դասախոսների, դասավանդվող մասնագիտական առարկաների և դասավանդման որակի նկատմամբ»:

Հիմնարկում դեռևս չի ձևավորվել ընդհանրական մոտեցում որակի ապահովման համակարգի կառուցվածքի վերաբերյալ, չկա մշակված Որակի ապահովման ձեռնարկ, չի ներդրվել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը գործընթացների համար: Ըստ քաղաքականության՝ որակի ապահովման գործընթացների իրականացումը հիմնարկի տնօրենի պարտականությունների շրջանակում է, սակայն նրա գործառույթները հստակեցված չեն:

Պայմանավորված քաղաքականության ներդրման կարճ ժամանակամիջոցով՝ Հիմնարկի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը դեռևս չի վերլուծվել, իսկ փորձագիտական խմբի հետ հանդիպումների մասնակիցները հիմնականում ծանոթ չէին ՈԱ քաղաքականության դրույթներին:

Հիմնարկը ներկայումս չունի որակի ապահովման առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում կամ պատասխանատու: Հիմնարկի ուսումնական գծով պատասխանատուն զուգահեռ իրականացնում է այլ պարտականություններ ևս, որոնք կապված են որակի ներքին ապահովման գործընթացների հետ: Ուսումնական գծով պատասխանատուի պարտականությունների մեջ է ամեն շաբաթ Հիմնարկի տնօրենին ներկայացնել հաշվետվություն՝ ուսումնական գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև հարցումների կազմակերպումը և արդյունքների վերլուծությունը: Որակի ապահովման հետ կապված գործառույթները որևէ կերպ հստակեցված չեն: Վերլուծությունների և ուսանողների հետ հանդիպումների արդյունքների հիման վրա տնօրենը որոշում է կայացնում կամ դրանք ներկայացնում է Գիտական խորհրդի քննարկմանը:

Որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման համար հիմնարկի կողմից առանձին ֆինանսական ռեսուրսներ չեն տրամադրվում, հարցումների կազմակերպման համար տրամադրվում են նյութական ռեսուրսներ:

Որակի ներքին ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավվածությունն ապահովող հիմնական մեխանիզմը հարցումներին մասնակցությունն է: Հարցումներն

անցկացվում են միայն ուսանողների շրջանում՝ կիսամյակը մեկ անգամ: Արտաքին շահակիցները որակի ապահովման որևէ գործընթացում ներգրավված չեն:

Որակի ապահովման գործընթացում ներգրավման ձևերից է դիտարկվում նաև Հիմնարկի տնօրենի, ուսումնական գծով պատասխանատուի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ ուսանողների պարբերական հանդիպումները: Փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ ուսանողները հավաստեցին, որ հանդիպումները արդյունավետ են, քանի որ թույլ են տալիս բարձրացնել իրենց հուզող հարցերը: Որպես փաստ նրանք նշեցին մեկ դասախոսի հետ կապված խնդրի լուծումը, ծրագրերում կրկնությունների առկայության և դասերի սկսվելու ժամի փոփոխության հարցերը:

Կրթության որակի բնագավառում Հիմնարկի քաղաքականության մեջ նախատեսված է գործողություն՝ «ըստ անհրաժեշտության վերանայել Հիմնարկի քաղաքականությունը կրթության որակի բնագավառում՝ հաշվի առնելով ուսանողների կողմից վերհանված կրթական կարիքները»: Ներկա պահին դեռևս չի իրականացվում որակի ապահովման համակարգի ազդեցության գնահատում կրթական գործընթացների բարելավման վրա, հարցումների և հարցաշարերի արդյունավետության գնահատում: Վաղ է խոսել գնահատումների հիման վրա որակի ապահովման համակարգի կամ դրա բաղադրիչների վերանայման մասին:

Հիմնարկը պարբերաբար ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության տարբեր համալսարանների հաջողված փորձերը, իրականացնում է որակի ապահովման համակարգի բենչմարքինգ՝ սեփական համակարգում բարելավումներ իրականացնելու նպատակով:
Դեռևս չեն մշակվել անհրաժեշտ մեխանիզմները, չի հավաքագրվում տեղեկատվություն որակի ապահովման քաղաքականությամբ նախատեսված հիմնական գործընթացների վերաբերյալ: Ուսումնական գծով պատասխանատուի՝ ամեն շաբաթ Հիմնարկի տնօրենին ներկայացվող հաշվետվություններն էլ վերաբերում են ուսումնական գործընթացին:

Հիմնարկի ղեկավարությունը կարևորում է իրականացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, ինչը գործունեության մի շարք ոլորտներում ուղղորդիչ դեր է ունեցել փաստաթղթերի մշակման, գործընթացների ներդրման և արտաքին գնահատման նախապատրաստման առումով:

Ներքին և արտաքին շահակիցների համար տեղեկատվության ստացման հիմնական միջոցը «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի կայքէջն է և Հիմնարկի ֆեյսբուքյան հարթակը: Կայքում ներկայացվում են հիմնականում կրթական ծրագրին վերաբերող միջոցառումները՝ արտերկրից հրավիրված դասախոսների մասին տեղեկատվություն, ուսանողների շրջանում անցկացվող հարցազրույցներ և այլն: Մեծ տեղ է հատկացվում նաև դիմորդներին անհրաժեշտ տեղեկատվության ներկայացմանը. ընդունելության կարգ, ժամանակացույց, առարկայական ծրագրեր, ձևաչափեր և այլն:

Կայքի՝ հավատարմագրման գործընթացի մեկնարկն ազդարարող էջում հասանելի են հիմնարկի գործունեության և ուսումնական գործընթացի թափանցիկությունն ապահովող փաստաթղթեր՝ կանոնադրություններ, կարգեր, ուղեցույցներ և այլն: Հասանելի են կրթական ծրագրի մասնագիրը, ուսումնական պլանը, դասացուցակները, դասախոսական կազմը և այլն: Կայքում տեղ են գտել նաև Հիմնարկի քաղաքականությունը կրթության որակի բնագավառում, հարցումների անցկացման կարգը և հարցաթերթի ձևաչափը:

Ինչ վերաբերում է հարցումների արդյունքների վերլուծությանը կամ որևէ այլ գործընթացի որակի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանը շահակիցների համար՝ ապա կայքում դրանք բացակայում են:

Փորձագիտական այցի հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը չի ստանում հարցումների արդյունքների վերլուծությունների իրենց վերաբերող մասը, չնայած որ հարցումների կազմակերպման մասին տեղեկացված են:

Դատողություններ: Դրական է, որ, կարևորելով որակի ապահովման գործընթացները, 2023թ. մշակվել է ««Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի քաղաքականությունը կրթության որակի բնագավառում», առանձնացվել են որոշակի ուղղություններ, նաև գործողություններ: Սակայն դրանք չեն կոնկրետացվել պլանների մակարդակով, թեկուզ որևէ մեկ գործընթացի ուղղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ առաջնային կարևորություն պետք է տալ կրթական ծրագրի որակի ապահովման գործընթացներին, իրականացնել դրանց պլանավորումը և կազմակերպումը:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունը և հանդիպումների ժամանակ ձեռք բերված տեղեկատվությունը փորձագիտական խմբին թույլ են տալիս եզրակացնել, որ հիմնարկում ավելի շատ կենտրոնացած են ուսումնական գործընթացների կազմակերպման վրա, և քիչ ուշադրություն է դարձվում որակի ապահովման խնդիրներին: Գերազանցության կենտրոնի նման կազմակերպությունների որակի ապահովման համակարգերի բենչմարքինգի հիման վրա պետք է մշակել որակի ապահովման սեփական համակարգի կառուցվածքը՝ հստակեցնելով մասնակիցներին և նրանց պատասխանատվությունները:

ՈԱ գործընթացներն իրականացնելու համար Հիմնարկը տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը որպես շահերի բախում է դիտարկում այն փաստը, որ ուսումնական գործընթացների պատասխանատուի վրա են դրված որակի ապահովման պարտականությունները: Բացի այդ, խումբը խիստ կարևոր է համարում ՈԱ գործընթացների իրականացման համար պատասխանատու անձանց մասնագիտական զարգացումը, որի պակասը ներկայումս կարող է խոչընդոտել այդ գործընթացների լիարժեք և արդյունավետ ներդրմանը:

Որակի ապահովման կիրառվող մեխանիզմներից են հարցումները, սակայն փոքրաթիվ ընտրանքի պարագայում հանդիպումները և ֆոկուսխմբային քննարկումներն ավելի արդյունավետ կարող են լինել: Հիմնարկն ունի լավ փորձ՝ տնօրենի, ուսումնական գծով պատասխանատուի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ ուսանողների հանդիպումները, որոնք թույլ են տալիս բարձրացնել խնդիրներ և հասնել դրանց լուծումներին: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս ձևաչափով հանդիպումները պետք է շարունակվեն, բայց նաև դրանց օրակարգերը լրացվեն որակի ապահովման քաղաքականության նպատակներից բխող խնդիրների քննարկմամբ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Հիմնարկը կարևորում է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, ինչը շատ պիտանի գործընթաց է արտաքին գնահատման նախապատրաստվելիս: Փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկի համար օգտակար կլիներ ամեն տարի կամ երկու տարին մեկ իրականացնել ինքնավերլուծություն կամ կազմել հաշվետվություն ըստ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների՝ նախօրոք ձևավորելով արտաքին գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության ցանկը և աղբյուրները, հավաքագրելով և վերլուծելով այն:

Դրական է, որ «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի պաշտոնական կայքէջում շահակիցներին հասանելի են ներքին գործընթացները կանոնակարգող, դիմորդներին և ուսանողներին աջակցող մի շարք փաստաթղթեր, որոնք նպաստում են թափանցիկության ապահովմանը: Բացակայում են հարցումների արդյունքների վերլուծությունները, կրթական ծրագրի և այլ գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը ՈԱ համակարգի ոչ ամբողջական գործարկման արդյունքն է: Վերանայման կարիք ունի նաև հարցումների արդյունքների վերլուծությունների դասախոսական կազմին չտրամադրելու մոտեցումը. չէ՞ որ այդ գնահատականների հիման վրա նրանք պետք է բարելավեն իրենց աշխատանքը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ««Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկը չունի հաստատված ՈԱ համակարգ կրթական ծրագրի բարելավման տեսակետից, բացակայում են ՈԱ գործողությունների պլանը և ընթացակարգերը, չի կիրառվում որակի կառավարման ՊԻՍԲ շրջափուլը գործընթացների նկատմամբ, ՈԱ գործընթացների կառավարման նպատակով չի տրամադրում առանձին մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, ՈԱ գործընթացներում ներառված աշխատակիցները չունեն ոլորտում աշխատանքի համապատասխան կարողություններ, չի հավաքագրվում անհրաժեշտ տվյալներ ՈԱ քաղաքականությամբ առանձնացված գործընթացների և արտաքին գնահատումների համար, վերլուծությունների արդյունքները հասանելի չեն ներքին և արտաքին շահակիցներին, չի իրականացվում որակի ապահովման գործընթացների ազդեցության գնահատում կրթության բարելավման վրա, փորձագիտական խումբը գտնում է, որ Հիմնարկը չի բավարարում 10-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Իմ քայլը» հիմնադրամի «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական Հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Անուշավան Մակարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

29-ը մայիսի, 2024թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Անուշավան Մակարյան - 2001 թվականին ստացել է Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2006-ին՝ դոցենտի կոչում: 1978-1983թթ սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում, 1983-1986թթ եղել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ասպիրանտ: 1986-1988թթ աշխատել է ՀՀ Գիտությունների Ակադեմիայի Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1988թ. մինչ օրս ընդգրկված է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնում: 2011-2013թթ. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում աշխատել է «Որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» ծրագրի ղեկավար, իսկ 2013-2019թթ. եղել է Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: 2011թ.-ից ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի ապահովման հավաստագրված փորձագետ է: 2016- 2019թթ. եղել է ՌԴ «Росаккредагенство» հավատարմագրման պետական գործակալության կրթության հավաստագրված միջազգային փորձագետ, 2019թ.-ից մինչ օրս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն է:

Արամ Սահարյան - 1987 թվականին ստացել է ֆիզմաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,2001թ.-ին ֆիզմաթեմատիկական գիտությունների դոկտոր: 1977 - 1982 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: 1982 – 1986թթ. եղել է ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ, 1992 – 1996թթ.՝ ասիստենտ, 1996 – 2008թթ.՝ դոցենտ: 2003 – 2009թթ. եղել է Աբդուս Սալամի անվան Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի ռեգուլյար աշխատակից: 2016 – 2018թթ. ՀՀ Գիտության պետական կոմիտեի Գիտական քաղաքականության վարչության պետ: 1987թ.–ից մինչ այժմ ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի ավագ գիտաշխատող է: 2009թվականից մինչ օրս ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի պրոֆեսոր է: 2017 թվականից մինչ այժմ ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչն է: 2018 թվականից մինչ այժմ ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի լաբորատորիայի վարիչն է: 300-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է:

Ալեքսանդր Գուսև - 1999թվականին ավարտել է Բելգորոդի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 2004 թվականին ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2020 թվականին՝ ֆիզիկայի և մաթեմատիկայի գիտությունների դոկտոր: 1999-2004թթ. եղել է Մ. Գ. Մեշերյակովի անվան տեղեկատվական տեխնոլոգիաների լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող, 2005-2009թթ.՝ գիտաշխատող, 2010-2021թթ.՝ ավագ գիտաշխատող: 2019 թվականից մինչ օրս Դուբնայի պետական համալսարանի պրոֆեսոր է: 2021 թվականից մինչ օրս Մ. Գ. Մեշերյակովի անվան տեղեկատվական տեխնոլոգիաների լաբորատորիայի առաջատար գիտաշխատող է: Գիտական գործունեության արդյունքները հրապարակվել են ավելի քան 120 հոդվածներով:

Մաքսիմ Վինիչենկո - 2009 թվականին ավարտել է Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի կիսահաղորդիչների և նանոէլեկտրոնիկայի ֆիզիկայի ամբիոնը: 2012 թվականին եղել է նույն համալսարանի կիսահաղորդիչների և

նանոէլեկտրոնիկայի ֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ: 2013թվականին ստացել է Ֆիզիկայի դոկտորի գիտական աստիճան կիսահաղորդիչների ֆիզիկայի բնագավառում: 2009 – 2015թթ. եղել է Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի կիսահաղորդիչների և նանոէլեկտրոնիկայի ֆիզիկայի ամբիոնի դոցենտ: 2014 – 2020թթ. եղել է Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի կիսահաղորդիչների և նանոէլեկտրոնիկայի ֆիզիկայի ամբիոնի ավագ գիտաշխատող: 2013 – 2018թթ. Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի կիսահաղորդիչների և նանոէլեկտրոնիկայի ֆիզիկայի ամբիոնի ավագ դասախոս: 2017 – 2020թթ. եղել է նույն համալսարանի ընդունելության հանձնաժողովի գործադիր քարտուղար: 2018 – առ այսօր Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի էլեկտրոնիկայի և հեռահաղորդակցության ինստիտուտի Ինժեներական ֆիզիկայի բարձրագույն դպրոցի դասախոս է: 2020 – առ այսօր Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի «Տեխնիկական ֆիզիկա» մագիստրատուրայի և բակալավրիատի կրթական ծրագրի ղեկավարն է:

Իննա Մելքոնյան - Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Բիոինժեներիա և բիոինֆորմատիկա բաժնի 1-ին կուրսի ուսանող է:, փորձագիտական խմբի ուսանող անդամ: 2024թ.-ին մասնակցել է ՌԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	03.04.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամի ղեկավար կազմի հետ	09:30	10:15	45 րոպե
2.	Հանդիպում «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի տնօրենի հետ	10:25	11:25	60 րոպե
3.	Հանդիպում ուսումնական գծով պատասխանատուի հետ	11:35	12:35	60 րոպե
4.	Հանդիպում Գիտական խորհրդի ներկայացուցիչների հետ	12:40	13:20	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
6.	Ռեսուրսների դիտարկում	14:40	16:00	80 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:15	18:15	120 րոպե

	04.04.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Quanta» Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի կրթական ծրագրի գիտական ղեկավարի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Աշխատակազմի ղեկավար, Գործառնությունների գծով պատասխանատու) ղեկավարների հետ	14:10	15:20	70 րոպե

6.	Հանդիպում շրջանավարտների հետ (10-12 հոգի)	15:30	16:20	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:30	17:20	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	19:00	90 րոպե

	05.04.2024թ.	**Մեկնարկ**	**Ավարտ**	**Տևողություն**
1.	Հանդիպում որակի ներքին ապահովման պատասխանատու/ների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Բաց հանդիպում	10:30	11:10	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:20	12:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:40	17:20	220 րոպե
6.	Հանդիպում ղեկավար անձնակազմի հետ, այցի ամփոփում	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Հիմնարկի զարգացման որևէ մակարդակի ծրագիր կամ պլան. ՌԾ	1
2.	Տարեկան աշխատանքների հաշվետվություններ	1
3.	Տարեկան ծախսերի նախահաշվի օրինակ /կենտրոնի մասով, առկայության դեպքում/	2
4.	Ֆինանսական ծախսերի վերաբերյալ տնօրենի զեկուցագրի օրինակ	2
5.	Գիտխորհրդի ձևավորման կարգ	2
6.	Պլանավորման փուլի ավարտին կատարված աշխատանքի ամփոփման արձանագրություններ	2
7.	Թեզերի օրինակներ	3
8.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողի հաշվետվություն	3
9.	Դասավանդման նյութերի օրինակներ	3
10.	Հարցումների վերլուծություն դասավանդման մեթոդների վերաբերյալ	3
11.	Թեզերի պատրաստման ժամանակացույցներ և կատարման վերահսկման հիմքեր	3
12.	Գնահատման թերթիկ	3
13.	Գրախոսությունների օրիանկներ	3
14.	Ուսանողների գնահատման ժամանակույց	3
15.	Ընդունող հանձնաժողովի ձևավորման հրաման	4
16.	Ընդունելության քննությունների համար նախատեսված թեստեր, թեմաներ, առաջադրանքներ	4
17.	Ուսանողական հարցումների վերլուծություններ	4
18.	Աշխատանքային պայմանագրի օրինակ կամ հրամանի ձև	5
19.	Դասախոների վերաբերյալ հարցման արդյունքներ	5
20.	Հաստիքացուցակ	5
21.	Պաշտոնի անձագրեր	5
22.	Հարցումների արդյունքները ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ	7
23.	Ֆինանսական միջոցների հատկացման զեկուցագրի օրինակ	7
24.	Հաշվետվությունների օրինակներ	8

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Քվանտային նյութերի և նանոֆոտոնիկայի լաբորատորիա,
- Օպտիկայի և ատոմային ֆիզիկայի ուսումնական լաբորատորիա,
- Ֆոտոնիկայի և արհեստական բանականության լաբորատորիա։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԿԾ - Մասնագիտական կրթական ծրագրեր
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - Որակի ապահովում
ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
ՈՈՇ - Որակավորումների ոլորտային շրջանակ
ՊԴԿ - Պրոֆեսորադասախոսական կազմ
ՌԾ - Ռազմավարական ծրագիր
ՈՒՕ կազմ- Ուսումնաօժանդակ կազմ